



Հոկտեմբեր-Նոյեմբեր-Դեկտեմբեր 2015

Կեդրոնական Վարչության գործունեություն

4-9 Հոկտեմբեր 2015ին, Երևանի մեջ տեղի ունեցավ Հայ Օգնության Միության 71-րդ Համահայկական Պատգամատրական Ժողովը, որոն կը մասնակցեին միության 25 երկիրներէ ընտրուած պատգամատրներ, հիւրեր և դէտեր:



Ժողովի բացման պաշտօնական արարողությունը տեղի ունեցավ 4 Հոկտեմբերին՝ DoubleTree by Hilton պանդոկին մէջ: Բացման հանդիսութեան ներկայ էր Կեդրոնական Վարչութեան ատենապետ Դոկտ. Մկրտիչ Մկրտիչեան, որ այս առիթով մամուլով հրապարակած իր խօսքին մէջ կ'անդրադառնար հայութեան ներկայ կեանքի պայմաններուն, և կ'ընդգծէր «ներկայ ճակատագրական հանգրուանին հայութեան ղեկավար ուղղությունը, այն է՝ հայկական ուժի և կարողականութեան համախմբումը՝ հայկական բռունցքը աւելի ազդեցիկ դարձնելու նպատակով: Ուժի աղբիւր է համահայկական հասարակութեան կազմությունը»:

Հաղորդագրություն

Համազգային-Թարգմանչաց Վարժարանը կը միանայ Համազգայինի կրթական հաստատություններու ծրագրին

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության Կեդրոնական Վարչությունը և Թարգմանչաց Վարժարանի Ընկերակցությունը ուրախութեամբ կը ծանուցեն, որ Փարիզի արուարձան Իսի-լէ-Մուլինայի Թարգմանչաց Վարժարանը, վերանուանուելով Համազգային-Թարգմանչաց Վարժարան՝ կը միանայ Համազգայինի կրթական հաստատություններու ծրագրին:

Իսի-լէ-Մուլինո հաստատուող առաջին հայերը եղած են 1915ի ցեղասպանութենէն վերապրողներ: Աւելի ուշ, 1970-2000ական թուականներուն, անոնց միացած են Լիբանանէն, Պարսկաստանէն և Հայաստանէն ներգաղթողներ, համայնքին թիւը հասցնելով 5,000-ի: Խմբուելով 1975-ին հաստատուած Հայց. Առաք. Եկեղեցւոյ շուրջ, այս համայնքն է, որ 1996-ին հիմը կը դնէր Թարգմանչաց Վարժարանին, արդիւնք Պարոն Զատիկ Ասլանեանի անխոնջ ճիգերուն և տեղւոյն քաղաքապետարանի աջակցութեան: Թարգմանչաց Վարժարանը ֆրանսական պետութեան հետ իր համաձայնագիրը կը կնքէ 2005-ին:

3,000 մէթր քառակուսի տարածութեան վրայ կառուցուած Թարգմանչաց Վարժարանի եռայարկ շէնքը ունի 15 դասարաններ, հանդիսասարահ և ներքին ու արտաքին բակեր: Վարժարանը կը լրացնէ պետութեան կողմէ սահմանուած ապահովական բոլոր կանոնները և կրնայ ընդունիլ 400 աշակերտներ: Ներկայիս, վարժարանը ունի շուրջ 80 աշակերտներ, որոնք կը յաճախեն մանկապարտէզի և նախակրթարանի կարգերը: Կը ծրագրուի մօտիկ ապագային մեկնարկել վարժարանի միջնակարգ և երկրորդական բաժինները:

Համազգային-Թարգմանչաց Վարժարանի ուսումնական յայտագիրը կը կազմեն պետութեան կողմէ ճշդուած ֆրանսերէնի

և անգլերէնի ծրագիրները, որոնք կ'ամբողջանան հայերէնի և հայոց պատմութեան դասաւանդութեամբ: Նախակրթարանէն շրջանաւարտներու յաջողութեան տոկոսը 100 առ հարիւր է, իսկ անոնց նիշերու միջինը՝ 80 առ հարիւր: Այսպիսով, Համազգային-Թարգմանչաց Վարժարանը առիթ կ'ընծայէ Իսի-լէ-Մուլինայի և շրջակայ թաղամասերու հայ համայնքի մանուկներուն, որ անոնց կրթությունը հարստանայ ֆրանսական և հայկական երկճիւղ մշակոյթներով, որոնք կը կազմաւորեն ապագայ քաղաքացին:

Համազգայինի գոյություն ունեցող կրթական հաստատություններու ծրագրին կը միանայ Համազգային-Թարգմանչաց Վարժարանը, որ գորացած հայ համայնքի սրտին մէջ իր քսան տարիներու գոյութեամբ, պիտի վայելէ Համազգայինի տասնամեակներու կրթական և մշակութային գործունեութեան արգասիքը, ըլլայ այդ ուսուցիչներ պատրաստելու, երկարաշունչ կրթական ծրագիրներ մշակելու և Պէրյուֆի, Մարսիլիոյ ու Միտնիի Ճեմարաններու փորձառութեան ճամբով, ըլլայ՝ Համազգայինի համասփիւրջեան և հայրենական կազմակերպական ցանցով կամ մշակութային միջազգային յայտագիրներ հովանաւորելով:

Համազգայինի Կեդրոնական Վարչութեան և Թարգմանչաց Վարժարանի միջև Շաբաթ, 5 Դեկտեմբեր 2015-ին կնքուած գործակցութեան պայմանագիրը գայն ստորագրող կողմերուն կու տայ Համազգային-Թարգմանչաց Վարժարանի բարգաւաճման և յարատևութեան ապահովութեան երաշխիքը:

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության Կեդրոնական Վարչություն Պէրյուֆ, 11 Դեկտեմբեր 2015



«Լալան ու Արան» – «Գոյներու Աշխարհ» խաղը հրապարակուած

Համագգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութիւնը այսու կը ծանուցէ, թէ iOS և Android գործիքներուն համար, իր ձեռնարկած հայերէնով մանկական դաստիարակչական Լալան ու Արան խաղերու շարքին առաջինը՝ Գոյներու Աշխարհ խաղը հրապարակուած է: Կիրառական (application) ձևատրումով Լալան ու Արան խաղերը երեք տարեկան և վեր մանուկներուն հաճելի և դիւրին եղանակով պիտի սորվեցնեն արևմտահայերէն և արևելահայերէն:

Գոյներու Աշխարհը ունի գլխաւոր երկու կերպարներ՝ Լալան ու Արան, որոնք ցուցնունքներ պիտի տան մանուկներուն, անոնց ընկերակցելով խաղի մէկ մակարդակէն միւսը: Այս խաղերուն միջոցով, երեխան պիտի սորվի, ծանօթանայ և զարգացնէ յիշողութիւնը, կեդրոնացումը, լեզուն, տրամաբանութիւնը, բազմակողմանի մտածելակերպը, ստեղծագործական կարողութիւնը, երևակայութիւնը և այլն:

Լալան ու Արան – Գոյներու Աշխարհ խաղը կարելի է ներբեռնել անվճար կերպով, դիմելով App Store և Google Play առցանց խանութներուն: Իսկ խաղերու մասին մանրամասնութիւններ կարելի է գտնել նոյնանուն կայքէջին՝ www.lalanouaran.com-ի վրայ:



Համագգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի շրջանաւարտներուն

Այսու կը հաղորդենք, որ Երևանի Պետական Համալսարանի նախագահութիւնը և Համագգայինի Կեդրոնական Վարչութիւնը խորհրդակցելով՝ մէկ կողմէն ԵՊՀ-ի և միւս կողմէն Համագգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի միջև 12 Դեկտեմբեր 1996ին կնքուած համագործակցութեան և փոխանակութեան պայմանագրի, Հիմնարկի շրջանաւարտներուն իրենց ուսումը ԵՊՀ-ի մէջ շարունակելու կարելիութիւնը տուող 4-րդ կէտի վաւերականութիւնը երկարաձգած են մինչև 2024 թուականի աւարտը:

Համագգայինի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի շրջանաւարտները յաւելեալ մանրամասնութեանց համար կրնան կապուիլ Համագգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ (Պէլրոյթ 961-4-715684, central@hamazkayin.com):

Համագգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութիւն
Պէլրոյթ, 11 Նոյեմբեր 2015



Համագգայինի կորուստներ

Համագգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը գովէ Համագգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբի վաստակաւոր դերասան ու բեմադրիչ Վարուժան Խորըշեանի մահը, որ պատահեցաւ, Երկուշաբթի 28 Դեկտեմբեր 2015ին: Ողբացեալը ծնած էր 1937ին, Ալէյ, Լիբանան: Խորըշեան իր թատերական առաջին քայլերը սկսած է 16 տարեկանին, Ժորժ Սարգիսեանի հետ: 1960ին մեկնած է Լոստոն, ուր հետևած և աւարտած է Լոստոնի Webber Douglas Academy of Dramatic Art-ի դասընթացները: 1965ին վերադարձած է Լիբանան և մաս կազմած Համագգայինի «Լոն Շանթ» թատերախումբին: Երկու տարի ետք հիմնած է «Թատրոն 67» թատերախումբը: Տարիներու ընթացքին «Թատրոն 67» և Համագգային «Գասպար Իփէկեան» թատերախումբին հետ ներկայացուցած է «Սալեմի Վիուկները», «Գինը», «Կամուրջէն Դիտուած», «Բոլոր Զաւակներս», «Երկրորդ Պողոտայի Բանտարկեալը», «Կայսր», «Հին Աստուածներ», «Հանրային Պարտէզի Մէջ Ուտարայիկ», «Երկնքի Ճամբով», «Մեծ Վարպետ Սոխեալը», «Մինչև Ո՛ր», «Վենետիկի Վաճառականը», «Շեփորդ Հնչեցոր», «Մարա Սառ», «Վերակացուն», «Վենետիկեան Երկուակներ», «Շերի Նուար», «Բլրեցի Եփէն», «Ալաֆրանկա», «Հայաստանի Լեռներուն Սրնգահարը», «Արևելեան Ատամնարոյժ» և շարք մը այլ ներկայացումներ:

1979-1987 տարիներուն, Խորըշեան Հայաստանի մէջ բեմադրած է թատերական 5 ներկայացումներ և 1987-ին արժանացած «Պետրոս Ադամեան» շքանշանին: Ան առաջին սփիւռքահայն էր, որ խորհրդային ժամանակաշրջանին այս շքանշանը կը ստանար: 2000ին Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի ձեռամբ պարգևատրուած է «Մերոյ Մաշտոց» շքանշանով: Նոյն տարին պատուրում է ստան Համագգայինի Կեդրոնական վարչութեան կողմէ՝ Համագգայինի շքանշանով, իսկ 2004ին Լիբանանեան Համալսարանի Գեղարուեստի Բարձրագոյն Հիմնարկին շքանշանով: 2008ին ՀՀ Մշակոյթի Նախարարութենէն ստացած է ոսկի մետալ, և Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին ձեռամբ պարգևատրուած Ս. Սահակ-Ս. Մերոյ շքանշանով:

Վարուժան Խորըշեան անելի քան 20 տարի Լիբանանեան համալսարանին մէջ դասաւանդած է թատերական արուեստը: Երկար տարիներ ստանձնած է Համագգայինի «Գասպար Իփէկեան» թատերախումբի ղեկավարութիւնը: Իր թատերական ասպարէզի ընթացքին, ան անգլերէնէ հայերէնի թարգմանած է 22 թատերական կտորներ:

Խորըշեանի մահուան առիթով, ՀՀ Մշակոյթի նախարար Յասմիկ Պողոսեան ողբացեալի ընտանիքին և գործակիցներուն յղած է ցաւակցագիր մը, որուն մէջ կ'ըսուի. «Մեր գորակցութիւնն ենք յայտնում ձեզ՝ անհատուցելի կորստի ցաւը յաղթահարելու համար և մաղթում ենք ոգու ամրութիւն»:



Համագգայինի Լրատու Հրատարակութիւն՝ Համագգայինի Կեդրոնական Վարչութեան Լոյս կը տեսնէ՝ եռամսեայ դրութեամբ Իմբագիր՝ Վիգէն Թիֆէնքճեան Լուրերու համադրում՝ Արին Գալուստեան, Թամար Գասապեան Գեղարուեստական ձևատրում՝ Տանիա Օհանեան © Բոլոր իրաւունքները վերապահուած



www.hamazkayin.com

Համազգայինի Շրջաններ

Հայաստան

• Հայ նշանատր և սիրուած դերասան, ժողովրդական արուեստագէտ Սօս Սարգսեանի ծննդեան օրը՝ 24 Հոկտեմբեր 2015ին, Տէրեան 65 հասցէին վրայ բացումը կատարուեցաւ անոր նուիրուած յուշատախտակին, որուն վրայ գրուած էր. «Այս տանն է ապրել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սօս Սարգսեանը»:

Յուշատախտակի հեղինակ, Հայաստանի մշակոյթի գործիչ Լևոն Իգիթեան այս առիթով յայտնած է, որ երբ կը պատրաստէր յուշատախտակը, մնայուն կերպով մտքին մէջ ունէր այն իրականութիւնը, որ Սօս Սարգսեան սիրոյ հսկայական պաշար ունէր և բոլորին բաժին կը հանէր անկէ: Ան երբեք չէր բւեր, որ ասիկա կարևոր յատկանիշ է, այլ նկարագրային գիծի վերածած էր սէր շոյալելը, դիտել տուած է Իգիթեան՝ հաստատելով, որ մեծ ուրախութեամբ ու սիրով պատրաստած է յուշատախտակը:



Հայկական ազգային շարժապատկերի ակադեմիայի նախագահ, Հայաստանի արուեստի գործիչ Դաիթ Մուրադեան հաստատած է, որ սերունդները մնայուն կերպով պիտի սնուին Սօս Սարգսեանի ստեղծագործական և բարոյական ժառանգութենէն: «Այսօր ոչ միայն յիշատակի ու խոնարհումի, այլ նաև հպարտութեան օր է, որովհետև մենք ունեցած ենք Սօս Սարգսեանի հետ ապրելու կարելիութիւն: Հայ մշակոյթի սինտրէն մէկը մեր աչքին առջև ստեղծագործած է, իսկ մենք վայելած ենք անոր գեղեցիկ ներկայութիւնը», նշած է ան:

• 18-19 նոյեմբերին Երևանի մէջ կայացած է «Արդի հայերէնի հիմնախնդիրները» բնաբանով երկօրեայ գիտաժողով՝ կազմակերպութեամբ Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան և Երևանի Պետական Համալսարանին:

ԵՊՀ-ի հայ բանասիրութեան բաժանմունքի նախագահ Արծրուն Աւագեանի բացման խօսքէն ետք, ողջոյնի խօսք ըրած են Հայաստանի կրթութեան և գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը և



ԵՊՀ-ի նախագահ Արամ Մինոնեանը: Ըստ նախարարին՝ «Խնդիրը մեր առջև ծառայած մարտահրաւերներն ընկալելու ազգային գիտակցութեան մէջ է»: Ան շեշտած է, որ կարևոր է աշխարհի զարգացման ներկայ կանոնները հասկնալ ու առոնց համահունչ ապահովել հայերէնի զարգացումը: Ան նշած է հայախօսութեան նահանջը Սփիւքի մէջ ու հայերէնի աղաւաղումը ու հայերէնի դասաւանդման մեծ բացթողումները նոյն ինքն հայրենիքի մէջ: Իսկ ԵՊՀ նախագահը յոյս յայտնած է, որ, մանր հարցերով զբաղելու փոխարէն, գիտաժողովը պիտի կարողանայ քննարկել հիմնախնդիրները: Ան մատնանշած է, որ ներկայիս լեզուի վերաբերեալ բանավիճային նիւթերը կը բացակային ու հայագիտութիւնը դադրած է պահանջուած մասնագիտութիւն ըլլալէ:

Իր ողջոյնի խօսքին մէջ Հայաստանի Սփիւքի նախարար Հրանտ Զակոբեան ըսած է, թէ լեզուամտածողութեան կորուստը հոգեկերտուածքի կորուստ է. «Այսօր արևմտահայերէնը անհատների, կազմակերպութիւնների հոգածութեան առարկան է, իսկ նրա պահպանումը պիտի լինի հայոց պետութեան խնդիրը»: Ան յատուկ կերպով անդրադարձած է երկու հիմնական խնդիրներու, որոնց ուղղութեամբ պէտք է աշխատանք տարուի՝ «Առաջինը արևելահայերէնի կանոնակարգման խնդիրն է, որը հնարատր է արդիւնաւէտ իրականացնել Հայերէնի բարձրագոյն խորհրդի ստեղծմամբ: Երկրորդ կարևոր հիմնահարցը հայերէնի երկու ճիւղերի մերձեցման խնդիրն է»: ՀՀ Սփիւքի նախարարն ընդգծած է, որ արևմտահայերէնը մեր լեզուամշակութային հարստութիւնն է, մեր մշակոյթի հիմքը և պէտք է ըլլայ հայոց պետականութեան, ողջ հայ ժողովրդի մշտական հոգածութեան առարկան: Այս առիթով ներկաներուն ողջոյնի խօսք ուղղած է նաև Համազգայինի Կեդրոնական վարչութեան ստենապետ Մկրտիչ Մկրտիչեան, որ յետոյ նաև զեկուցած է ու անդրադարձած ազգային միատրման

խնդրին՝ շեշտելով միացեալ ուղղագրութիւն ունենալու անհրաժեշտութիւնը:

Ներկաները ողջունած է այլևս Հայաստանի Համազգային Հայ Կրթական և Մշակութային Հիմնադրամի նախագահ Լիլիթ Գալստեան:

Գիտական զեկուցումներ ներկայացուցած են Հայաստանէն ու Սփիւքէն լեզուաբաններ, ուսուցիչներ, մտաւորականներ: ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչ Եւրի Աւետիսեան խօսած է լեզուական պարբերական կանոնարկումներու անհրաժեշտութեան մասին, որոնցմով կը պաշտպանուի լեզուն արտաքին ու անցանկալի ազդեցութիւններէ: Արևմտահայերէնի պահպանութիւնը պէտք է ըլլայ հայրենիքի և Սփիւքի համատեղ ջանքերով, ըսած է ան:



Առաջին օրուան աւարտին Եւրի Աւետիսեան ներկայացուցած է գիտաժողովէն բացակայ Վրէժ-Արմէն Արթինեանի, Հիլտա Գալֆայեան-Փանոսեանի ու Անժել Քիրքոբեանի զեկույցները: Երկրորդ օրը զեկույցներ ներկայացուցած են Սոնիա Քիլեճեան, Սուրէն Դանիելեան, Յակոբ Չոլաքեան, Ջուլիետա Գիլամիրեան, Բագրատ Ներսիսեան, Անի Մուրադեան, Զարիկ Աղաջանեան և Արևիկ Քամալեան: Զեկույցներէն ետք տեղի ունեցած են աշխոյժ քննարկումներ:

Գիտաժողովի աշխատանքները ամփոփելով խօսք առած են ԵՊՀ Ընդհանուր Լեզուաբանութեան Ամբիոնի վարիչ Վարդան Պետրոսեան, Հայ Բանասիրութեան Բաժանմունքի նախագահ Արծրուն Աւագեան, Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչ Եւրի Աւետիսեան և Հայաստանի Համազգային Հիմնադրամի նախագահ Լիլիթ Գալստեան, որ մասնատրապէս շեշտած է, որ լեզուի պահպանման և խնդիրներու լուծման ճանապարհին անհրաժեշտ է պետական լեզուա-քաղաքականութիւն:

Կազմակերպիչներու ցանկութիւնն է, որ տոյն գիտաժողովը ասկէ ետք կազմակերպուի տարեկան դրութեամբ:

Վ.-Ա. Ա.

Շուէդ

• 9 Հոկտեմբեր 2015ին Շուէտի Ուփսալա քաղաքի Missionskyrkan-ի մէջ կիթառի մենահամերգ ունեցաւ երաժշտագէտ, Համազգայինի Լիբանանի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցի ուսուցիչ Մկրտիչ Միքայէլեանը: Համերգը կազմակերպած էր Համազգայինի Շուէտի մեկուսի կազմը: Երոյթին կը մասնակցէին հայ և շուէտացի հիւրեր: Ներկաները մեծ հաճոյքով վայելեցին Մ. Միքայէլեանի Կիթառի հիանալի կատարումը:

Միքայէլեանի Շուէտ այցելութիւնը կազմակերպուած էր այն ժամանակ, երբ Ուփսալա քաղաքին մէջ տեղի կ'ունենար International Festival of Guitar-ը՝ Հոկտեմբեր 7-11, 2015:



Հաղորդագրություն

Հովանավորությամբ Լիբանանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանին և գործակցությամբ Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միության, 31 Հոկտեմբերին-7 Նոյեմբեր Լիբանան այցելեց Երևանի Պետական Համալսարանին 9 անդամներով բաղկացած պատուիրակություն մը, որուն առաքելությունն էր վերանորոգել լիբանանահայ կարգ մը կառույցներու հետ հաստատուած համաձայնությունները, զարգացնել աշխատանքային նոր գործելադաշտեր, կազմակերպել ժողովրդային լսարաններ, հայ աշակերտության ծանօթացնել համալսարանն ու Հայաստանի մէջ ուսման կարելիությունները, ինչպէս նաև հասարակության ներկայացնել Երևանի Պետական Համալսարանի Հայոց ցեղասպանության 100-ամեակի հրատարակությունները:

Իր այցելության ընթացքին, պատուիրակությունը հանդիպեցաւ լիբանանահայ հոգևոր պետերուն, կուսակցություններու և մամոյ ներկայացուցիչներուն, ինչպէս նաև վարժարաններու կրթական պատասխանատուներուն և միություններու ներկայացուցիչներուն հետ:

• Անցեալ տարեշրջանին Համազգայինի «Արեգ» թատերախումբը հանրության ներկայացաւ հեղինակ, գեղարուեստական ղեկավար և բեմադրիչ Ռոպերթ Առաքելեանի «Ոսկի խնձորը» ամանորեայ երաժշտական թատերախաղով, ապա՝ Հայոց ցեղասպանության 100-ամեակին նուիրուած «Կարօտ» ներկայացումով:



Առաջին անգամ ըլլալով, այս տարի փառատօնին իր մասնակցությունը բերաւ Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբը՝ 4 Հոկտեմբեր 2015ի երեկոյեան Համազգային Պետական Թատրոնի բեմին վրայ ներկայացնելով Լոնն Շիրինեանի «Կոթողական» թատերախաղը, բեմադրութեամբ՝ Յակոբ Տէր Ղուկասեանի և մասնակցութեամբ՝ գաղութի հանրաձանօթ դերասաններ Վարդան Մկրտիչեանի, Հրայր Գալեմբերեանի և Հերմինէ Նիւրբեթեանի:

• Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ, 3 Հոկտեմբեր 2015ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ ելոյթ ունեցաւ հանրաձանօթ արուեստագէտ, հրապարակագիր և բանաստեղծ Մարի Ռոզ Ապուսեֆեան՝ ներկայացնելով իր հեղինակած ու բեմադրած «Տիգրան Մեծ» մենախաղերը, որ հիմնուած է Պերճ Զէլթունցեանի «Աստուծոյ 12 օրը» թատրոնին, հայոց պատմության և իր խոհերուն ու վերլուծումներուն վրայ:



Հանրաձանօթ արուեստագէտը բարի գալուստ մաղթեց ներկաներուն՝ յայտնելով իր ուրախությունը և ջերմ շնորհակալությունը Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան: Ապա ինչ կը վերաբերի «Տիգրան Մեծ» ներկայացման ըսաւ, թէ ինչպէս այսօր, անցեալին ալ այս նոյն շրջանը գտնուելով պատերազմի մէջ դիմած է Տիգրան Մեծի օգնութեան, որ շուտով յաջողած է ազատագրել տարածքները և իր իշխանությունը հաստատել անոնց վրայ, ապա անեցոց. «Ճիշդ է Տիգրան Մեծ չկայ այլևս, որ շրջանը դուրս բերէ այս բարդ վիճակէն, բայց կայ Տիգրանի շատաիդ հայությունը»: Մարի Ռոզ Ապուսեֆեան դիտել տուաւ, թէ ինչպիսի հայրենասիրութեամբ ու հայրենապաշտութեամբ տոգորուած էր Տիգրան Մեծ: Ապա անեցոց, որ Տիգրան Մեծի մասին այսօր քիչ տեղեկություններ հասած են մեզի և անելի շատ օտար աղբիւրներու վկայություններ են անոնք, որովհետև քրիստոնէութեան մուտքէն ետք հեթանոսական շրջանին վերաբերող գրեթէ ամէն բան ոչնչացուած է: Ապուսեֆեան ըսաւ. «Ապրելով Միացեալ Նահանգներու մէջ անկարելի է չմտածել քաղաքական հզօրութեան մասին, հետևաբար՝ «Տիգրան Մեծ» թատերգութեան մէջ հիմնուած եմ առաւելաբար քաղաքական հզօրութեան գաղափարին վրայ»:

• 6 Հոկտեմբեր 2015ին, «Ազդակ»ի «Փինիկ» սրահին մէջ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ «Պօղոս Մնասպեանի մտերմութեամբ» խորագրով յուշ երեկոյ մը, որուն բանախօսն էր դոկտ. Մարի Ռոզ Ապուսեֆեան: Զեռնարկը սկսաւ տեսերիզի մը ցուցադրութեամբ, որուն մէջ գրականագէտ Պօղոս Մնասպեան կը խօսէր

իր և իր գրական գործունէութեան, գրական խոհերուն մասին:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Արազ Գոճայեան: Ապա Շողիկ Թորոսեան մեկնաբանեց Կոմիտասի «Ծիրանի ծառ» և «Աստուծոյ» երգերը՝ դաշնակի ընկերակցութեամբ Յասմիկ Գասպարեանի:



Բեմ հրաիրուեցաւ բանախօս դոկտ. Մարի Ռոզ Ապուսեֆեան, որ յաջողեցաւ բոլոր ներկաները փոխադրել այնպիսի ոլորտ, ուր նոր կեանք շնորհուեցաւ արժէքատր անձի մը, որուն ստեղծագործությունները հայ ժողովուրդի դիմագիծը կը կազմեն: Մարի Ռոզ Ապուսեֆեան ըսաւ, թէ Պօղոս Մնասպեանի գործին առաջին ծանօթացումէն 51 տարի ետք բախտ վիճակուած է իրեն ներկայացնելու Մնասպեան մարդն ու ստեղծագործողը անոր ապրած քաղաքին մէջ, ապա շնորհակալություն յայտնեց բոլոր անոնց, որոնք այս առիթը տուին իրեն:

Գրիգոր Պըլտեան՝ Պէլրոյթի մէջ

• Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմակերպութեամբ, 9 Հոկտեմբեր 2015ին, «Ազդակ»ի «Փինիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ շնորհահանդէս սփիւքահայ գրող Գրիգոր Պըլտեանի երեք գիրքերուն՝ «Մեմեր», «Տարմ» և «Կրկնագիր մարդը», որոնք յոյս տեսած են Համազգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատունէն:

Գրական ձեռնարկին բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Շողիկ Մկրտիչեան՝



յայտնելով, որ ձեռնարկը լաւագոյն առիթն ու փորձն է գրասէր հասարակութեան հանդիպելու գիրքերու հեղինակին հետ: «Վահէ Մէթեան» հրատարակչատան տնօրէն Յակոբ Հաւաթեան ըսաւ, թէ Համազգայինի գանձարանը հարստացած է Գրիգոր Պըլտեանի կոթողային գործերով: Ան շնորհակալություն յայտնեց հեղինակին, որ գիրքերուն հրատարակությունը վստահած է Համազգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան: Ապա Շողիկ Մկրտիչեան հակիրճ ներկայացուց Գրիգոր Պըլտեանի «Տարմ» և «Մեմեր» գիրքերը: Ան ըսաւ, թէ «Տարմ»ը իր մէջ կը խմբէ բազմաառ փորձ-ընթերցումներ, իսկ «Մեմեր» գործին մէջ ձայն մը նկարներ կը տրամադրէ գրողին, որ գրէ անոնց մասին: Այստեղ առաջ կը դրուին ժամանակի հարցը, աղէտի խնդիրը, մանաւանդ երբ ժամանակը կրնայ մեքենականօրէն յուշի առասպելի շատ ծանօթ կառոյց մը առաջ բերել:

11 Հոկտեմբեր 2015ին Համազգայինի «Լոնն Շանթ» Կեդրոնի «Գ. և Հ. Արմէնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ բազմաձայն գրոյց՝ նիւթ ունենալով «Լիբանանահայութեան



«Կարօտ»ը Մարտ ամսուան ընթացքին ներկայացուեցաւ Պէլրոյթի և Այնճարի, ապա Ապրիլ 24ին դարձեալ Պէլրոյթի մէջ: Ներկայացման խտասալիկը Մայիսին ցուցադրուեցաւ Գիւմրիի «Վերածնունդ» միջազգային եօթներորդ մրցոյթ-փառատօնին՝ աշխարհի շուրջ տասնհինգ երկիրներու թատերախումբերու շարքին գրաւելով երկրորդ տեղը:

Տարբեր երկիրներու մասնագէտներէ բաղկացած դատական կազմի որոշումով «Կարօտ»ին շնորհուեցաւ միջազգային մրցոյթներու դափնեկիրի պատուաւոր կոչում:

• Հոկտեմբեր 2002էն ի վեր և հետևողականօրէն 13րդ անգամ, Երևանի մէջ 1-10 Հոկտեմբերին տեղի ունեցաւ «Հայ Ֆեսթ» տարեկան փառատօնը: Սոյն փառատօնին կը հրաիրուին զանազան երկիրներու թատերախումբերը, որոնք հանդէս կու գան տարբեր լեզուներով:

և պոլսահայության իրականության պատկերացումը գրականության մեջ»: Մասնակիցներն էին՝ Նորվան արք. Զաքարեան, Գրիգոր Պրլտեան, Յարութին Բիրբրեան և Սևան Տեյիրմեան:



Բազմաձայն գրոյցին բացման խօսքը արտասանեց Շաղիկ Մկրտիչեան: Ան անդրադառնալով Գրիգոր Պրլտեանի գիրքերուն, որոնց առանցքը կը կազմէ ապրում վայրը՝ իր շրջապատով, կարգ մը հարցադրումներ ըրաւ, թէ որքանով մեր գրականութիւնը իր ստեղծման վայրերուն մէջ կ'արձագանգէ և ինչքանով անոնց իրականութիւնը մեր գրականութեան մէջ կ'երևի:

Առաջին բանախօսը՝ Նորվան արք. Զաքարեան, պատմականակնարկներ տեսնելով 1975 թուականին վրայ, երբ քաղաքացիական պատերազմը սկսաւ Լիբանանի մէջ, ըսաւ, որ այդ ժամանակաշրջանին Պրլտեան կ'ապրէր Փարիզի մէջ և ներշնչուելով այդ դէպքերէն լծուեցաւ «Քանդուող քաղաքի մը համար» գործին: Նորվան արք. Զաքարեան հաստատեց, որ ասիկա հոյակապ հնարք և որակ ունեցող գործ մըն է, որուն մէջ կ'արտացոլայ Պրլտեանի հանճարը: Ան կարդաց գիրքէն հատուած մը, որ առնչուած էր Պէրլտեանի շեշտելով Պրլտեանի բանաստեղծական զգայնութեան կարողութիւնը, որովհետև ընթերցողը պահ մը կը հաւատար, որ հեղինակը Պէրլտեան կը գտնուէր այդ աշխատութիւնը գրած ատեն, մինչ ան հեռուոր Փարիզի մէջ էր: Եզրափակելով իր խօսքը՝ արբազանը հաստատեց, որ Պրլտեան լիբանանահայության իրականութեան պատկերացումը տուած է գրականութեան մէջ: Այնուհետև Ռուպինա Մկրտիչեան կարդաց «Մեմեր» գիրքէն հատուած մը՝ վերլուծելով զայն:

13 Հոկտեմբեր 2015ին, Université Saint-Joseph Համալսարանի Գրականութեան Բաժնի Polyvalente սրահին մէջ տեղի ունեցաւ «Վարուժանը ընդդէմ աղէտին» դասախօսութիւնը, որուն ընթացքին Գրիգոր Պրլտեան ֆրանսերէտով ներկայացուց իր խօսքը, ինչպէս նաև Վարուժանը մատչելի դարձուց արաբախօս և ֆրանսախօս ներկաներուն, յատկապէս համալսարանի գրականութեան ուսանողներուն:



Բացման խօսքը կատարեց համալսարանի Գրականութեան Բաժնանունըքն դոկտ. Քրիսթին Պապիկեան-Ասսաֆ: Ան նախ հայոց լեզուով արտասանեց բարի գալուստի խօսք մը՝ խորին շնորհակալութիւն յայտնելով Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան, որ առիթը ստեղծեց այսպիսի

հանդիպումի մը, որ շատ շահեկան պիտի ըլլայ գրականութեան բաժնանունըքն ուսանողներուն համար:

Ֆրանսական Գրականութեան Բաժնանունըքն Դոկտ. Լէյա Թամրազ անդրադարձաւ Վարուժանի ներկայացման կարևորութեան՝ իբրև անձանօթ և միևնույն ժամանակ անշրջանցելի տիպար: Ան ծանօթացուց Պրլտեանը իբրև ֆրանսահայ ժամանակակից գրող, հեղինակը «Մեմեր», «Նշան», «Հարուածը» և այլ գիրքերու, որոնք թարգմանուած են ֆրանսերէնի:

14 Հոկտեմբեր 2015ին, Համազգայինի «Կոմիտաս» մասնաճիւղի սրահին մէջ տեղի ունեցան գրական ընթերցումներ Գրիգոր Պրլտեանի իր «Տեղագրութիւն» և «Մանտրաներ» գիրքերէն՝ ներկայութեամբ ընթերցատէր համեստ խմբակի մը:

Իր բարի գալուստի խօսքին մէջ, Սեդա Ունճեան-Խտրշեան ողջունեց ներկաները և յայտնեց, որ այս հանդիպումը Գրիգոր Պրլտեանի գրական ձեռնարկներուն վերջինն էր Պէրլտեանի մէջ:



Ապա խօսք առաւ Շաղիկ Մկրտիչեան՝ նշելով. «Գրիգոր Պրլտեանի գրական հանդիպումներն ու ձեռնարկները իրենց ամբողջութեան մէջ յաջողեցան լիբանանահայ հասարակութեան ծանօթացնել ոչ միայն Գրիգոր Պրլտեանը անձամբ, այլ նաև անոր գործերը: Գրիգոր Պրլտեանի գրականագիտական և վերլուծական ելոյթներէն ետք այսօրուան ծրագիրով կ'անցնինք գործի՝ ընթերցելով անոր գիրքերէն հատուածներ»: Շաղիկ Մկրտիչեան հաստատեց, որ եթէ նայինք Պրլտեանի «Տեղագրութիւն» գրքի էջերուն, ապա կը տեսնենք կտրատուած տողեր, պատատուած էջեր, որոնք կը զգացնեն պատերազմը: Ապա հրաւիրեց Նորվան արք. Զաքարեանը, որ իր կարգին ներկայացնէ, ապա կատարէ ընթերցումներ «Տեղագրութիւն» գիրքէն: Ան սահմանելով Գրիգոր Պրլտեանի գրականութեան վարդապետութիւնը ըսաւ. «Անիկա կը ձգտի հողէն կտրուած մեր հաւաքականութիւնը ազատագրելու երբի արարման և կը ձգտի իրականացնել սփիւռքեան պայմաններուն մէջ մեր ինքնութիւնը ունենալու, պահելու արարումը»:

• 13 Նոյեմբեր 2015ին, Համազգայինի «Լևոն Շանթ» Կեդրոնի «Գ. և Հ. Արմէնեան» սրահին մէջ Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կազմակերպած էր հանդիպում մը ֆրանսահայ բեմադրիչ և Փարիզի Association Audiovisuelle Arménienne-ի հիմնադիր անդամ Ժաք Քէպատեանին հետ: Հրաչ Թոքթաթեան բարի գալուստ մաղթեց բոլորին, ապա ներկայացուց օրուան հիւրը: Ան ըսաւ, որ Քէպատեան հեղինակ ու բեմադրիչ է վաերագրական ժապաւէններու, որոնց կարգին Sans retour possible ժապաւէնը, որ կը խօսի Հայոց ցեղասպանութենէն վերապրածներու մասին: Ժապաւէնը ատենին ցուցադրուած է ֆրանսական պատկերասփիւղի կայանէն՝ երկու շաբթուան տևողութեամբ, և մեծ արձագանգ գտած է ֆրանսական միջավայրին մէջ, որմէ ետք Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը մնայուն քննարկման առարկայ կը դառնայ պետական և հասարակական շրջանակներուն մէջ:



Sans retour possible վաերագրական ժապաւէնին մէջ Հայոց ցեղասպանութենէն ճողոպրած հայորդիները կը պատմեն իրենց ապրած ողիսականը, ապա Ֆրանսայի մէջ իրենց կրած դժուարութիւնները, նորը շինելու, նոր կեանք մը սկսելու տքնաջան աշխատանքը: Բոլոր վերապրածները կը խօսին չսպիացող ցաւէ մը մղուած: Ժաք Քէպատեանի այս ժապաւէնը գեղարուեստական բարձր մակարդակի վաերագրական աշխատանք մըն է, որ գեղեցիկ ձևով միաձուլուած են դերասանութիւնն ու վաերագրութիւնը՝ զիրար ամբողջացնելով:

Ժապաւէնի ցուցադրութեան աւարտին Ժաք Քէպատեան պատասխանեց ներկաներուն հարցումներուն:

• Կազմակերպութեամբ Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան, 29 Նոյեմբեր 2015-ին, «Նշան Փալանճեան» ճեմարանի «Վասպուրական» սրահին մէջ տեղի ունեցաւ մեծարանքի երեկոյ՝ նուիրուած Սեդա Կանաչեան-Թիսիւզեանի:



Հանդիսութեան բացման խօսքը փոխանցեց Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ Սեդուհ Այնթապեան: Ան ըսաւ, թէ Սեդա Կանաչեան-Թիսիւզեանի Լիբանանէն Ամերիկա մեկնումին առիթով մեկտեղուած ենք, և թէ և տխուր է հրաժեշտի այս պահը, սակայն ուրախութեամբ պէտք է ընկալենք, որովհետև ան արժանի է այս մեծարանքին: Այնթապեան կարևորութեամբ շեշտեց սփիւռքի մէջ տարուող կամուտը աշխատանքն ու ծառայողներուն մեծութիւնը, որուն օրինակելի տիպարներէն է Սեդա Կանաչեան-Թիսիւզեան: Ապա անդրադարձաւ Համազգայինի «Կոմիտաս» մասնաճիւղի հիմնադրութենէն մինչև օրս մշակութային կեանքին մէջ անոր ունեցած ներդրումներուն: Այնթապեան ըսաւ, թէ «Սեդա Կանաչեան-Թիսիւզեան իր աշխատանքներով և ծառայութեամբ ունեցած է իր վաստակը, որ միայն յարգանք կը պարտադրէ»:

Գեղարուեստական յայտագիրով ելոյթ ունեցան «Բ. Կանաչեան» երաժշտական քոլեճի ուսանողներ և ուսուցչական կազմէն անդամներ:

• Beirut Chants փառատօնի ելոյթներուն ծիրին մէջ, որոնց բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 20 Դեկտեմբերին, Հայ Աւետարանական Ա. Եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ փառատօնին 20-րդ ելոյթը՝ «Ծնունդ Աստուծոյ Փոքրիկներու Համար» խորագրով՝ Համազգայինի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբին կատարողութեամբ, Զաքար Քէշիշեանի խմբավարութեամբ և դաշնակի վրայ Լիանա Յարութիւնեանի ընկերակցութեամբ: Ելոյթին



բացումը կատարեց Beirut Chants փառատօնի հիմնադիր Միշլին Ալի Սամրա: Ըստ Ալի Սամրայի, Ս. Ծնունդը դիմաւորելու լուսադոյն ձևը փոքրիկներու ուրախալի և խաղաղաբեր երգերը վայելելն է: Ան յայտնեց, որ «Կարկաչ» երգչախումբի այս ելոյթի երգերու ցանկը ներշնչուած է Քրտ Տեպիսիի «Աստուծոյ Փոքրիկներու Ծնունդ» երգէն: Աւելի քան 19 տարիներ առաջ Լիբանանի մշակութային բեմերուն վրայ իր ներկայութիւնը հաստատելէ ետք, այս տարի եօթներորդ անգամ ըլլալով «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբը կը մասնակցի Beirut Chants փառատօնի ելոյթներուն: Ալի Սամրա իր խօսքը եզրափակեց յոյս յայտնելով, որ բոլոր անտուն փոքրիկները շուտով ապաստան գտնեն:

Ասպրախա

• Այս տարի համայն հայութիւնը բազմաթիւ միջոցառումներ իրականացրեց ի յիշատակ մեր ազգային ողբերգութեան հարիւրերորդ տարելիցին: Միտնիի «Նայիրի» պարախումբն էլ ամիսներ շարունակ քրտնաջան աշխատելուց յետոյ իր նոր համերգային ծրագիրը ներկայացրեց հայ հանդիսատեսի դատին: «Մենք յիշում ենք և պահանջում» բնաբանով համերգը տեղի ունեցաւ Մեպտեմբերի 27ին:

Համերգի առաջին մասում կատարեցին հայկական պարեր տարբեր տարիքային խմբերի պարման-պարմանուհիների կատարմամբ: Աչք շոյող հայկական ազգային տարազներով ներկայացւած պարերը մի պահ հանդիսատեսին հոգով տեղափոխեցին Հայաստան, ուր սկիզբ է առել մեր պատմութիւնը ու ձևաւորել է մեր ազգային մշակոյթը: Տղաների խրոխտ, առնական պարը, աղջիկների հեզաճկուն պարը լրացնում էին միմիանց ստեղծելով այն հայի կերպարը, որը գիտի ստեղծել ու արարել, որը գիտի պատմութիւն կերտել: Հանդիսատեսը հիացմունքի ջերմ ծափերով ողջունեց նաև ամենափոքրերի պարային խմբի կատարումը, որի ամենակրտսեր կատարողը հիացրեց ուղղակի գրաւեց հանդիսատեսի սիրտը: Ներկայացւած պարերը ընդմիջեցին հայկական երգերի կատարմամբ որոնք ներկայացրեցին համայնքում մեծ ճանաչում ստացած Իզաբել Մարգարեանը, Լիլիթ Մուրադեանը և Հայաստանից յատուկ

հրաւիրւած, «Հայաստանի Չայն» ծրագրի նախորդ տարուան յաղթող Մաշա Մնջոյեանը:



Համերգային ծրագրի երկրորդ մասն ամբողջութեամբ նուիրուած էր Մեծ Եղեռնի 100րդ տարելիցին: Հետաքրքիր մտայղացմամբ կազմւած ծրագրի այս մասը անտարբեր չթողեց ոչ մի հանդիսատեսի: Կրկին ալեկոծեց և ցաւից ճմլեց հայ հանդիսատեսի սիրտը մեր այն մէկ ու կէս միլիոն նահատակների համար, որոնց իրագործողները դեռ միջազգային դատապարտման չեն արժանացել: Բայց ազգային ողբերգութիւնը ներկայացնող տեսարանները փոխեցին և սկսեց հայի վերածննդի, հայ ապրելու և յարատւելու տեսարանները արտայայտող պարերը: Համերգը վերջացաւ հայ հոգու և կամքի յաղթանակի պարերի ներկայացմամբ: Բեմում յաղթականօրէն ծածանում էր հայկական եռագոյնը, որի հովանու ներքոյ ճախրում էր հայկական պարն ու հայկական երաժշտութիւնը:

Համերգի վերջում բեմ հրաւիրեց Պրն.

Ռաֆֆի Խանլարեանը իր գնահատականի խօսքը ասելու Նայիրի պարախումբի ելոյթի առթիւ: Պրն. Խանլարեանը անչափ բարձր գնահատեց պարախումբի ներկայացւած այս գեղեցիկ ծրագիրը նշելով որ միայն միասնականութեամբ մենք կարող ենք նման ծրագրեր իրագործել: Միայն միասնական լինելով մենք կկարողանանք պահպանել մեր մշակոյթը այս օտար ափերում:

Գնահատանքի բաժնում շնորհակալական խօսքեր ուղղեցին հագուստների կազմակերպման պատասխանատու Վեհիկ Յարութիւնեանին, պարախումբի ղեկավար Ասատուր Հաճեանին, պարուսոյց Լենա Հայրապետեանին և Հայաստանից հրաւիրուած պարուսոյց Հրաչէայ Բաղալեանին:

Երեկոն առանց անակնկալների չաւարտեց: Անցեալ տարի «Նայիրի» պարախումբի Հայաստանում ունեցած բարձր մակարդակի համերգային ծրագիր ներկայացնելու համար Պրն. Ասատուր Հաճեանը պարզևատուրել է Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութեան պատւերով: Մէկ այլ անակնկալ էլ սպասում էր Նայիրի վարչութեան փոխատենապետ Թադէ Բարամեանին: Այս տարի Համահայկական խաղերին մեկնող Արարատի մարզիկներին բարձր աջակցութիւն և օժանկութիւն ցուցաբերելու համար Պրն. Թադէ Բարամեանը պարզևատուրել է Մերժ Մարգարեանի յատուկ պատուգրով:

Յունաստան

• 31 Հոկտեմբեր 2015ին, Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբի «Աւետիքեան» սրահէն ներս, տեղի ունեցաւ Յունաստանի Համազգայինի Երաժշտական Դպրոցի հանդէսը: Ծնողներ, հարազատներ և քաջալերող հանդիսատեսներ վայելեցին աշակերտներու աշխատանքի արդիւնքը:

Համազգայինի Երաժշտական դպրոցը գեղեցիկ աշխատանք մըն է, որ լրջութեամբ կը կատարուի վերջին տարիներու ընթացքին, ձգտելով երևան բերել իւրաքանչիւր աշակերտի ձիրքն ու տաղանդը, միաժամանակ իրենց ծանօթացնելով հայկական դասական ու ժողովրդային երաժշտութեան գնայլելի աշխարհը:

• Հովանաւորութեամբ Աթէնքի արուարձաններէն Վուլա շրջանի Քաղաքապետական Երգչախումբին և համագործակցութեամբ Համազգայինի Յունաստանի Շրջանային Վարչութեան, 7-8 Նոյեմբեր 2015ին, Վուլայի քաղաքապետութեան Մշակութային Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ յունահայ արուեստագէտ Գրիգոր Նարինեանի վերջին տասնամեակներու աւելի քան 120 պատատաներու և մօտ 100 փայտագործ ձեռարուեստ ստեղծագործութիւններու ցուցահանդէսը, որ շարունակուեցաւ 14-15 Նոյեմբերի շաբաթավերջին ալ:



• 9 Նոյեմբեր 2015-ի երեկոյեան, «Միխայիլ Բարոյեանի» հաստատութեան ընդարձակ թատրոնէն ներս, UNESCOի Փիրէայի բաժանմունքի Պարի Միջազգային Խորհուրդը, պատմական տուեալներ վկայակոչող անդրադարձով՝ երաժշտապարային երեկոյ մը կազմակերպեց, նուիրուած Փոքր Ասիոյ տեղահանութիւններուն,

հալածանքներէ ու ջարդերէ մազապործ փրկուած, տառապած ժողովուրդներու ողիսականներուն՝ «Անոնք յաջողեցան ապրիլ, պարել ու երգել...» ընդհանուր խորագրով և ընդգրկելով արկածալից այդ ճակատագրին բնօրէն ենթարկուած ազգերու գաղթականական-ողբերգական երթի տուեալները:



Երգապարային այս ելոյթին ներկայացուեցաւ իւրայատուկ յայտագիր մը, ներառնելով Թրակիոյ, Պոնտոսի, Կապադովկիոյ, Իզմիրի և այլ շրջաններու ազգագրական, ժողովրդային ու աւանդական պարեր, յարգելու, այլև գօտեպնդելու համար աւանդական դարձած ժողովուրդներու կամքն ու անոնց կեանքի շարունակութիւնը՝ ապահով ու երաշխաւորող ապագայի վճռակամութեամբ:

• Հովանաւորութեամբ ՀՀ Սփիւքի Նախարար Հրանուշ Յակոբեանի և համակազմակերպութեամբ Աթէնքի քաղաքապետութեան, Համազգայինի Յունաստանի Շրջանային Վարչութեան և Աթէնքի քաղաքապետութեան Մշակութային, Մարմնամարզի և Երիտասարդութեան բաժանմունքին, 16 Նոյեմբեր 2015ին միացեալ բացառիկ համերգ մը կազմակերպուեցաւ Աթէնքի ընդարձակ «Փալլաս» սրահին մէջ, աւելի քան հազար հանդիսատեսներու ներկայութեան:



Աթէնքի քաղաքապետութեան Սիմֆոնիք Նուագախումբը հանդէս եկաւ մեծանուն

հայ երաժիշտ Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւններով՝ որոնց կարգին «Մասգարատ», «Սպարտակ» ու «Գայեանէ» պալէներէն հատուածներ և «Վալս», «Նոքթիւրն», «Մագուրքա», «Ռումանս», «Կալոփ» կտորները:

Արամ Խաչատուրեանի գործերէն առաջ նուագախումբը մեկնաբանեց 1935ի ծնունդ ծանօթ յոյն երաժիշտ ու խմբավար Թէոտորոս Անտոնիոյ տասնամեակներ առաջ յօրինած կտոր մը, որ օրին Celebration անունով ձօնուած էր յոյն և հայ բարեկամութեան: Այս յօրինումը հիմնուած է հայկական երգի մը վրայ, որուն շուրջ յօրինողը հիւսած է իր երկը:

Համերգին ներկայ եղան հայ և յոյն պաշտօնական հիւրեր, արուեստագէտներ, յօրինողներ, նուագողներ, խմբավարներ, քաղաքապետական խորհուրդներու անդամներ:

• Ատիկէի Համազգայինի «Սօս-Վանի» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ, 6 Դեկտեմբեր 2015ին, Աթէնքի քաղաքապետական «Աննա և Մարիա Քալուօթա» հանդիսարահէն ներս, տեղի ունեցաւ հայ տաղանդաւոր երիտասարդ երաժիշտներու մշակութային երեկոն, իսկապէս գեղարուեստական վայելքի բարձր մթնոլորտի մը մէջ: Երեկոն նպատակ ունէր յարգանքի տուրք մատուցանելու Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին, և անշուշտ՝ Հարիւրամեակի ծիրէն ներս, ինչ որ յաւելեալ յուզում, արժէք, այլև նպատակաւսացութիւն կուտար են երիտասարդ կատարողներուն, են զայն գոհունակութեամբ ընկալող մեր ժողովուրդին, ի մասնաւորի հաւաքուած ներկաներուն:



Ամբողջ ձեռնարկին ընդհանուր բնաբանն էր՝ «Երբ ապագան կը պատուէ անցեալը...»: Մէկ խօսքով՝ հինը և նորը. նորը և տեսլականներով պարուրուած մեր հեռանկարային գալիքը, ապագան:

Այս երեկոյին համար պատրաստուած էր գեղարուեստական աֆիշ մը ու գեղատիպ յայտագիր մը: Աֆիշը՝ օրեր առաջ արդէն գետնէն դուրս եկած էր արագաշարժ հաստատութիւններու և ակումբներու, ինչպէս նաև «Ազատ Օր»-ի մէջ լոյս տեսած յայտարարութեան մէջ: Յատկանշական է, որ յայտագրի վերջին էջին մէջ լոյս տեսած էին հայկական պատմական ու աւանդական նոթագրութեան համակարգի ու միջնադարեան երաժշտութեան խաղաղութեան նմոյշներ ու բացատրողական:

• Համազգայինի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը՝ Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբի երկար ամիսներու ծրագրային ու կազմակերպական հետևողական աշխատանքին շնորհիւ, թրքամերձ Ռոտտո կղզիին մէջ հիմնեց մասնաճիւղ մը, տեղացի խումբ մը հայերու խանդավառ մասնակցութեամբ:

Ի դէպ, Հայ Դատի Յանձնախումբը անցնող ամիսներու ընթացքին, և Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի երոթներու ծիրէն ներս, կազմակերպեց զուտ քաղաքական բովանդակութեամբ հրապարակային հանդիսութիւն մը, երեք տարբեր դպրոցներու մէջ Յեղասպանութեան ու Հայ Դատի բովանդակութեամբ դասախօսական շարք մը, ինչպէս նաև Հայոց Եղեռնի նիւթով ժապաւենի մը ցուցադրութիւնը, մեծ հետաքրքրութիւն ստեղծելով կղզիի քաղաքապետական, հաղորդակցական, մտադրական և համալսարանական շրջանակներէն ներս:

Հրապարակային ու տեղական մակարդակի նախապատրաստական այս աշխատանքներու լոյսին տակ, տեղւոյն «Մեմորիալ» պանդոկին մէջ, Դեկտեմբեր 12ին առաջին քայլ մը նետուեցաւ՝ ամիսներէ ի վեր խօսակցութեանց ու ծրագրումի նիւթ դարձած կղզիին մէջ հայկական մշակութային շարժում, ի հարկին, միութիւն մը, համազգայնական կազմակերպական կառուցում մը հիմնելու հեռանկարով:

Տեղւոյն վրայ, առաջին անգամ Շրջանային Վարչութեան վաերացումով կազմուեցաւ առժամեայ առաջին վարչութիւն մը՝ իր դիւանով, որուն գլխաւոր պարտականութիւնը պիտի ըլլայ մինչև Փետրուար 2016 կազմակերպել հիմնադիր ժողով և յառաջացնել ընտրովի առաջին վարչութիւնը:

Մասնաճիւղի հիմնադրութեան օրը ներկաներուն ցուցադրուեցաւ՝ այս ամրան ընթացքին Սիրոս կղզիին մէջ Արցախէն հիւրընկալուած տղոց մէկ երոթին վիտէոն, որ յուզում ու խանդավառութիւն ստեղծեց ներկաներուն մօտ:



Նշանակովի առաջին վարչութիւնը կը բաղկանայ հետևեալ ընկեր-ընկերուիներէն. Քէօսէեան Խարա՝ Նախագահ, Վասիլիու-Պարտիզպանեան Վասիլիս՝ Քարտուղար, Տեմէլիս-Յարութիւնեան Մայք՝ Գանձապահ, Մանուկեան Լարիսա՝ Խորհրդական, Մանուկեան Սթամբաթիս՝ Խորհրդական, Քէլէնեան Խորիսթոս-Հրանդ՝ Խորհրդական (Զիւղիցցոյի համաշխարհային ախոյեան):

• Յունաստանի Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Շրջանային Վարչութեան հրաւերին ընդառնալով, միութենական անդամներու, վարչութիւններու և յանձնախումբերու միացեալ ճաշկերոթ մը տեղի ունեցաւ Կիրակի՝ 20 Դեկտեմբեր 2015ի երեկոյեան, Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբի սրահէն ներս:



Ֆրանսա

• Փարիզի Համազգայինի վարչութեան նախաձեռնութեամբ, 19 Դեկտեմբեր 2015ին, Rue Bleue-ի Հայ Մշակութային Տան «Տէմորեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «l'Etrangère» գիրքի ներկայացումը հեղինակի՝ Վալերի Թորանեանի ներկայութեամբ:

Սրահը լեցուած էր ընթերցասէր հասարակութեամբ: Համազգայինի կողմէ երկու սերունդներու ներկայացուցիչներ խօսք առին. առաջինը՝ Նայիրի Միսեռեան, որ բացատրեց, թէ ինք ևս հասակ նետած է Ֆրանսայի մէջ, ունեցած է հայկական տան տաքով մթնոլորտ, ինչպէս հեղինակը ստացած է ֆրանսական և հայկական զուգահեռ դաստիարակութիւն: Ան ըսաւ, թէ գիրքը կարդալով ինքզինք պատկերացուցած է շատ մը տողերու մէջ, թէ ինչպէս հեղինակը յաճախած է հայկական միութիւններ, եղած է իր մեծ մօր՝ m'émé de St Chamond, ուշադրութեան և հոգատարութեան առարկան, թէ որքան հարազատօրէն ներկայացուցած է մեծ մօր հետ իր ունեցած յարաբերութիւնը և անոր իր վրայ ունեցած ազդեցութիւնը:

Նայիրի աւելցուց, որ այսօր աւելի լաւ կը հասկնայ հեղինակին ապրումները, զգացումները, մշակութային երկրորդեան դէմ յանդիման գտնուիլը և նոյնիսկ չափահաս տարիքին իր սորթին մէջ այժմ հանգիստ զգալը:



Ապա վարչութեան կողմէ խօսք առաւ Քրիստինա Շիրվանեան: Ան ծանրացաւ

հեղինակի գրական արժէքներուն վրայ. ներկայացուց անոր անսովոր, անսեղ ու թեթև գրչի ոճը: Շիրվանեան նկարագրեց, թէ ինչպէս ան կը յաջողի մերթ ընդ մերթ ընթերցողը յուզել կամ մանկունակ, սակայն սրամիտ մէջբերումներով տրամադրութիւն փոխել: Ան ընթերցողին մտքերը կը տանի իր իսկ մանկութեան, իր իսկ փորձառութեան հետ բաղտատական մը ընելու. ապրումներ, զորս կարելի է ընդհանրացնել: Շիրվանեան շնորհատրեց Թորանեանը՝ «l'Etrangère» գրքին մէջ ճարտարօրէն հայկական փառքերը և պատմութիւնը օտարներուն ծանօթացնելուն համար:

Թորանեան, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Համազգայինի Փարիզի վարչութեան, յուզուեցաւ հիւրասիրութեան ընթացքին իր գրքին մէջ նշած մեծ մօր պատրաստած կարկանդակները տեսնելով սեղաններուն վրայ: Ան բացատրեց, թէ որքան դժուարութեամբ քաղած է մեծ մօր տարագրութեան յուշերը և ինչպէս քսան տարիներ վերջ գանոնք յայտնութեան բերած է վէպի ընդմէջէն: Ան ըսաւ. «Զգացուած և շոյուած կը զգամ ինքզինքս, ձեր ցուցաբերած անկեղծ հետաքրքրութեան և գնահատականին համար»:

Թորանեան մասնաւոր ժամանակ տրամադրեց գիրքերը մակագրելու: Ներկաները բաժնուեցան ջերմ ու մտերիմ մթնոլորտի յիշատակներով:

• 14 Դեկտեմբեր 2015ին, 80է աւելի արուեստասէրներ հաւաքուած էին Փարիզի Հայ Մշակոյթի Տան «Տէմորեան» սրահին մէջ, դիտելու պատմաբան Արմէն-Գլոս Մուրաֆեանի հօր՝ գեղանկարիչ Զարեհ Մուրաֆեանի (1907-1980) նուիրուած Արթօ Փեփիվանեանի «Նկարել Յեղասպանութենէն ետք» (Peindre après le Génocide) խորագրեալ ժապաւենը:

Համազգայինի Պատգամաւորական-Ներկայացուցչական ժողովէն տարի մը անց, Շրջանային Վարչութիւնը նպատակայարմար գտաւ համախմբելու, առաջին հերթին, Ատիկէի մէջ գործող միաւոր կառոյցները, իրարու հետ փոխադարձ ծանօթացման ու ճանաչման լաւ առիթ մը ստեղծելու հեռանկարով:

Սոյն ճաշկերոթին ներկայ եղան Յունաստանի թեմակալ առաջնորդ Խորէն Արք. Տողրամանեան, Ատիկէի «Սօս-Վանի» մասնաճիւղի վարչական կազմը, «Յակոբ Փափագեան» քառաձայն երգչախումբի երկսեռ անդամներ, յանձնախումբն ու սիրուած խմբավար Հրայր Աւագ Քինյ. Նիկոլեան, «Նայիրի» պարախումբի պարողներ՝ իրենց յանձնախումբով և նուիրեալ պարուայցով՝ ընկ. Էտկար Եղեան, «Արշալիր Գագանեան» թատերախումբը՝ իր յանձնախումբով և տաղանդաւոր բեմադրիչով՝ Ալեքսի Սարիեան, Համազգայինի Երաժշտանոցը և անոր աշակերտները՝ գլխաւորութեամբ իրենց դաշնակի դաստիարակ ընկ. Գոհար Զիմանեանի, Համազգայինի Լուսանկարչական յանձնախումբի անդամներ, Facebook-ի յանձնախումբը, ինչպէս նաև Յունաստան ծնած կամ ապրող երիտասարդ տաղանդաւոր նուագողներ, որոնց երոթը վայելեցինք քանի մը շաբաթ առաջ, իրենց փորձառու դաստիարակ տիկին Այտա Փաշինեանի գլխաւորութեամբ:

Ճաշկերոթին յաջորդող գեղարուեստական բաժինը վարելու պարտականութիւնը վստահուած էր ընկ. Լիլիթ Մուրատեանին: Ընկերուիին առաջին առթիւ խօսք տուաւ յունահայոց թեմակալ առաջնորդ Խորէն Արք. Տողրամանեանին, որ վեր առաւ հայ մշակոյթի դերը յատկապէս սփիւռքեան հայագաղութներուն մէջ, ինչ որ յատկապէս իմաստ կուտայ նոր սերունդին՝ հայ մշակոյթին փարելու և հայկական արժէքները պահպանելու տեսակետէ:



Համազգայինի Փարիզի մասնաճիւղին կողմէ կազմակերպուած ձեռնարկին սկիզբը ներածական խօսքով հանդէս եկաւ Արմէն Մուրաֆեան և պատմեց, թէ երբ անցեալ Մայիսին – Հայոց Յեղասպանութեան զոհերու ոգեկոչումներու ծիրէն ներս – մայրաքաղաքի 5րդ թաղամասին մէջ կը ներկայացուէր իր հօր գեղանկարչական ցուցահանդէսը, ինք՝ Արթօ Փեփիվանեանէն խնդրած էր պարզապէս նկարել ցուցադրուած պատատաները, պատկերներնուտեսարանները: Բեմադրիչը դիտելով արուեստագէտին ստեղծագործութիւնները հետզհետէ խորացած էր այդ գործին մէջ, որովհետև անդրադարձած էր թէ նկարիչը իր կեանքի իրաքանչիւր հանգրուանին ամէն անգամ նոր ոճով և նոր գոյներով արտայայտուած էր իր ապրումներն ու զգացումները, «որոնք այնքան խօսուն կը պատկերէին փոքր տարիքէն որքացած Մուրաֆեանի ներաշխարհը, ուր կարծէք թաքնուած էր աստանդական ժողովուրդի մը ամբողջ պատմութիւնը», - դիտել տուաւ Փեփիվանեան:

Այնուհետև ցուցադրուեցաւ մէկ ժամ տևողութեամբ ժապաւենը, ուր իրաքանչիւր պատկեր կամ դիմանկար համեմուած էր պատշաճ երաժշտութեամբ

և Արմեն Մուսաֆեանի համապատասխան մեկնաբանությամբ:



Զարեհ Մուսաֆեան ծնած է Սամսոն՝ Սև Օռվու ափին: Ութ տարեկանին ինքզինք գտած է իր ամբողջ ընտանիքին դիակներուն առջև, որոնք 1915ի Յեղասպանության ժամանակ զոհուած ու սպանդի ենթարկուած էին: Իր մանկութիւնը անցուցած է որքանոցներու մէջ և ապրած թափառական կեանք մը՝ Յունաստանէն Իտալիա, ուր Միլանոյի Գեղարուեստի Ակադեմիային մէջ (Beaux-Arts) կատարելագործած իր արուեստը: Այնուհետև

Մուսաֆեան հանգրուանած է Զուիցերիա և վերջապէս հաստատուած Փարիզ, ուր շուտով ընդգրկուելով այն օրերու մտաւորական շրջանակին մէջ, նկարչութեան զուգահեռ նուիրուած նաև գրականութեան: Ունեցած է բազմաթիւ ցուցահանդէսներ, որոնք մեծապէս կը գնահատուած են արուեստի մարդոց կողմէ: 40 տարիներու ընթացքին Զարեհ Մուսաֆեան ճանչցուած է թէ՛ իբրև հայ մտաւորական և թէ՛ իբրև ֆրանսացի արուեստագէտ. յաջողած է գերազանցել իր ցարը՝ միաժամանակ խորանալով երգչական մշակույթի մէջ և պահպանելով իր արևելեան ոգին. ան կը հանդիսանայ Յեղասպանութեան խորհրդանշիչ մը: Այս նիւթին վերաբերեալ յիշատակի ցուցահանդէս մը կազմակերպած է 1965ին, Մեծ Եղեռնի 50ամեակին առիթով: Հայերէնով մտածող արուեստագէտը ներշնչուած է իտալացի դասական մեծերու գործերէն, ֆրանսացի հիասքանչ գունանկարիչներէն

(coloristes), տպարարապաշտներէն և ապա՝ Պոնսարէն և Մաթիսէն: Ան բացի Երոպայի և աւելի ուշ Միացեալ Նահանգներու զանազան շրջաններէն, ցուցահանդէսներ ունեցած է նաև Խորհրդային Հայաստանի մէջ (1967ին և 1971ին): Էսպէս խորհրդանշական պատկերներ գծած արուեստագէտը ծանօթ է իր դիմանկարներով, ծովանկարներով և գունատր տեսարաններով: «Վերապրողներ» թեման միշտ հետապնդած է զինք իր կեանքի տարբեր հանգրուաններուն, շատ քիչ անգամ ուղղակի անդրադառնալով Յեղասպանութեան նիւթին, որուն նկատմամբ զուսպ վերաբերում ունեցած է: Զարեհ Մուսաֆեանի կեանքին ու գործին նուիրուած այս ժապավէտը կը պարունակէր նաև փաստաթուղթեր, լուսանկարներ և այս ամէնը դիտուած՝ Արթո Փետիվիմանեան մասնագէտին ուսմանակով: Մրաի մուտքին ներկաներու տրամադրութեան տակ դրուած էին նաև այս ֆիլմին խտասալիկները:

Լոսպրոն

• 13 Հոկտեմբեր 1990ին ծնած Լոնտոնի Համազգայինի Լոնտոնի մասնաճիւղի հիմնադրութեան 25-ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ 21 Նոյեմբեր 2015ին, «Նաւասարդեան Կեդրոն»ին մէջ, հովանաւորութեամբ շրջանի հոգեւոր Առաջնորդ Հայր Յովակիմ Սրբազան Մանուկեանի, որուն կը ընկերանար Հայր Մովսէս Սարգսեան: Տօնակատարութեան կը մասնակցէր նաև Փարիզէն ժամանած Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Երոպայի Ներկայացուցիչ Աննա Յովհաննէսեան, ՀՀ Դեսպանատան ներկայացուցիչ Հայկ Խեմչեան եւ Համայնքային Խորհուրդի ատենապետ Արա Փալանուտեան: Ներկայ էին համայնքիս զանազան հաստատութիւններու ու միութիւններու վարչութիւններն ու ներկայացուցիչները ու հայրենակիցներու հոծ բազմութիւն մը:

Երեկոն սկսաւ Սրբազան Հօր կողմէ սեղանի օրհնութեամբ, ապա ներկաները հրաւիրուեցան համոտեւելու պատրաստուած ընթրիքը: Տօնակատարութեան յայտագիրը սկսաւ Ալեւուշ Գրիգորեանցի բարի գալուստի խօսքով, որմէ ետք Համազգայինի Լոնտոնի մասնաճիւղի վարչութեան ատենապետ Հրաչ Պօղոսեան փոխանցեց վարչութեան խօսքը: Ապա ներկաները դիտեցին երեք վայրկեան տևողութեամբ 25 տարիներ առաջ պատկերահանուած ֆիլմ մը, որ կը ցոյց կու տար միութեան հիմնադրութիւնը եւ առաջին վարչութեան անունները: Պրն. Պօղոսեան ներկայացուց 25 տարիներուն ընթացքին միութեան նուաճումներն ու դիմագրաւած դժուարութիւնները, շեշտը դնելով գաղութէն

ներս մշակութային ու կրթական գործին առաւել զարկ տալու անհրաժեշտութեան վրայ: Յաջորդաբար, երկու նորահաս պատանիներ Անի Ստեփանեան եւ Նարինէ Բեշիրեան արտասանեցին Մուշեղ Իշխանի «Հայ Լեզուն» բանաստեղծութիւնը, Համօ Մահեանի «Հայաստան»ը: Բեմ հրաւիրուեցան Համազգայինի հիմնադիր անդամներէն մէկը եւ մինչեւ վերջերս վարչութեան ատենապետ՝ Հայաստան Վարդանեան: Պրն. Վարդանեան անդրադարձաւ միութեան հիմնադրութեան հանգամանքներուն եւ համազգայնական երկար տարիներու իր յուշերուն՝ մանաւանդ սկզբնական տարիներու աշխատանքին: Արտա Հալաճեան ընթերցեց վկայութիւններ Համազգայինի կանոնագրէն ու միութեան նախահայրերէն՝ Նիկոլ Աղբալեանի եւ Լեւոն Շանթի միտքերէն, եւ գեղեցիկ կատարողութեամբ ներկայացուց Շուարշ Նարդունիի «Կարօս Հայոց Լեզուին» գրութիւնը: Լիլիթ Նահապետեանի դաշնամուրի կատարողութեամբ հնչեցին հայրենի նուագահան Աննօ Պապաջանեանի յօրինած կտորները:



Ն. Աղբալեան



Լ. Շանթ

Լոնտոնի ՀՀ Դեսպանատան ներկայացուցիչ Հայկ Խեմչեանի շնորհաւորական խօսքը մասնաւորապէս կանգ առաւ տարիներու ընթացքին Դեսպանատան եւ Համազգայինի միջեւ համագործակցութեան վրայ. իսկ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Երոպայի ներկայացուցիչ Աննա Յովհաննէսեան փոխանցեց Կեդրոնական Վարչութեան պատգամը, մաղթելով նորանոր յաջողութիւններ հայ մշակույթի եւ հայեցի կրթութեան գործին մէջ, ի նպաստ Լոնտոնի մէջ ծնած ու մեծցած մեր նոր սերունդին:

Յայտագիրը իր աւարտին հասաւ Յովակիմ Սրբազան Մանուկեանի օրհնանքի բովանդակակից ու քաջալերական խօսքով, որմէ ետք ներս բերուեցաւ 25-ամեակի կարկանդակը: Ձեռնարկի ընթացքին եղան զանազան նիւթական մեծ ու փոքր նուիրատուութիւններ, որոնք յայտարարուեցան տեղույն վրայ: Օրուան խօսնակ Ալեւուշ Գրիգորեանց վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեցրող արտոնց, որոնք 25 տարիներու ընթացքին մշտապէս եղած են միութեան կողքին, իրենց թանկագին նեցուկը բերելով նիւթապէս եւ բարոյապէս:



Այս մթնոլորտին մէջ, միութեան պատասխանատուները խոստացան նոր զարկ տալ մշակութային ու կրթական աշխատանքին, ի շահ համայն լոնտոնահայութեան ու մանաւանդ նորահաս երիտասարդ սերունդին:

Կիպրոս

• Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի վարչութեան այս տարեշրջանի առաջին մշակութային երեկոն տեղի ունեցաւ 18 Նոյեմբեր 2015ին: Յայտագիրը կը բաղկանար երեք բաժիններէ՝ գրական, երաժշտական եւ գեղանկարչական:

Վարչութեան ատենապետ Արթօ Դալիթեան ողջոյնի խօսքէն ետք սկսաւ երեկոյի գրական բաժինը նուիրուած Վագգէն Շուշանեանի: Յասմիկ Լիպարիտեան-Գոյուսեան հակիրճ կերպով ներկայացուց եղբարբախտ գրագէտին կեանքն ու գործերը, որմէ ետք անոր գործերէն ընթերցուեցին կատարեցին Լորա Մկրտիչեան, Շուշիկ Պապալեան եւ Արթօ Դալիթեան:



Երաժշտական բաժինով, Մարինէ Մանուշեան ներկայացուց Կոմիտաս վարդապետի կեանքն ու գործը: Կոմիտասի մասին հետաքրքրական կտոր մը կարդաց նաև

փոքրիկն Արագ Մանուշեան, արժանանալով ներկաներու գնահատանքին: Ապա, շնորհալի երգչուհի Զառա Բարխուդարեան դաշնակի ընկերակցութեամբ ներկայացուց Կոմիտասի «Մաղթերգ Հայրապետական», «Չինար ես», «Քելեր-Յուլեր», «Տրլէ Եաման» եւ «Շողեր Զան» երգերը:

Իսկ վերջին բաժինով, բազմատաղանդ արուեստագէտ Վարդան Թաշճեան ներկայացուց Մարտիրոս Սարեանի կեանքն ու գործը, որմէ ետք ան ցուցադրեց Մարեանի գործերուն սահիկները՝ հետաքրքրական բացատրութիւններ տալով իւրաքանչիւրի մասին:

Մշակութային երեկոն ամբողջացաւ գինիի եւ թեթեւ ուտելիքի սպասարկութեամբ, որմէ ետք ներկաները հրաժեշտ տուին, գեղեցիկ ու ջերմ երեկոյ մը վայելելով ըլլալու գոհունակութեամբ:

• 27 Նոյեմբեր 2015ին, կիպրահայութեան խանդավառ մասնակցութեամբ, տեղի ունեցաւ Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ լուսանկարներու ցուցահանդէսին բացումը, ներկայութեամբ Կաթողիկոսական փոխանորդ Նարեկ Արքեպիսկոպոսի, ձեռնարկի հովանաւոր պետական ներկայացուցիչ

Վարդգէ Մահտեսեանի, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Փոխ-Վարչապետ Արթուր Աղաբէկեանի, եւ Պուկլարիոյ վսեմաշուք դեսպան Հրիստօ Գեորգիեի:



Վարչութեան ատենապետ Արթօ Դալիթեանի եւ լուսանկարներուն հեղինակ Դալար Գոյուսեանի-Թորոսեանի խօսքերէն ետք, ցուցահանդէսին բացումը կատարեց նիկոսիոյ քաղաքապետ Կոստանտինոս Եորկաճիս, որ իր խօսքին մէջ դրուատեց կիպրահայ գաղութի աշխույժ մասնակցութիւնը երկրի ու յատկապէս Նիկոսիոյ մշակութային կեանքին:

Ցուցահանդէսը կը բաղկանայ Դալար Գոյուսեանի-Թորոսեանի 109 գեղատիպ լուսանկարներէն, որոնք արուեստի բարձր մակարդակով կը ներկայացնեն գրաւեալ հայրենիքի բնակավայրերն ու վանքերը, հնութիւններն ու ներկայ վիճակը:

Գանապրա

• 24 Սեպտեմբեր 2015ին, Համագրայինի Մոնթրեալի «Սանահին» մասնաճիւղի գրական յանձնախումբը կազմակերպած էր Գրիգոր Գրաճեանի հետ մտերմիկ հանդիպում, որուն ընթացքին ներկայացուցաւ անոր «Վերադարձ Դէպի Անցեալ» գիրքը եւ ցուցադրուցաւ Արեւմտահայաստանի մեր պապենական հողերուն վրայ հեղինակի այցելած վայրերուն տեսերիզի ցուցադրութիւնը:

Գրիգոր Գրաճեան շրջանաւարտ է Պէրյուֆի Ամերիկեան Համալսարանէն, մասնագիտանալով դեղագործութեան մէջ: Աւելի ուշ, ան մագիստրոսի պատրաստութեան համար հետեւած է նոյն համալսարանի Պատմութեան բաժանմունքի սեմինարներուն, աշխատակցելով տեղոյն յայտնի դասախօսներուն հետ: Հայերէնին, հայ գիրին ու գրականութեան անոր յարգանքն ու սէրը, այլեւ ազգային շունչն ու բարոյական արժեքները իր մէջ սերմանած են իր ծնողքը, մասնատրապէս հայրը, որ ուսուցիչ էր, մանկավարժ եւ գրող:

Նախքան հեղինակին բեմ հրաւիրելը, Գրական յանձնախումբի ներկայացուցիչ Անահիտ Պալեան գրասէր հանրութեան ներկայացուց գրական յանձնախումբի երկտասարդ նոր ուժը՝ Քրիսթինա Տէր Ստեփանեանը, որ վերջերս Սուրիայէն գաղթած ու հաստատուած է Մոնթրեալ: Քրիսթինայի բանաստեղծութիւնները լոյս տեսած են Հալէպի «Գանձասար», Հայաստանի «Գրող Հրաշալիք» եւ Ամերիկայի «Լոյս Աշխարհ» թերթերուն մէջ: Անահիտ Պալեան ընթերցեց անոր բանաստեղծութիւններէն հաստուած մը եւ զինք հրաւիրեց բեմ ամփոփ ձեռով ներկայացնելու համար գիրքը:

Քրիսթինայի ներկայացման յաջորդեց Գրիգոր Գրաճեանի շատ հետաքրքրական ելոյթը, որ մերթ պատուեցնելով, մերթ տեսերիզի ցուցադրութեամբ կարծես կախարդած էր ներկաները եւ զանոնք տարած էր շատ հեռու վայրեր, դէպի Լիբանան, Սուրիա, Պոլիս, Աղթամար, Տիգրանակերտ եւ Համշէն: Գրաճեան կանդիդատուար այդ վայրերուն մէջ պատահած դէպքերուն, կեանքի առօրեային եւ սովորութիւններուն մասին:

Ձեռնարկի աւարտին, ներկաները գնահատեցին հեղինակի աշխատանքը, որուն յաջորդեց հարցում-պատասխաններով ընթացող գրոյց եւ կարծիքներու փոխանակում հայութիւնը յուզող կարգ մը նիւթերու շուրջ: Աւելի ուշ, հեղինակը մակագրեց իր գիրքը, որուն վաճառքի ամբողջ հասոյթը տրամադրեց «Սանահին» մասնաճիւղի վարչութեան:

• 29 Սեպտեմբերին, 60 գրասէրներ ներկայ եղան Մոնթրեալի «Սանահին» մասնաճիւղի գրական ձեռնարկին, ունկնդրելու ֆրանսահայ լեզուաբան, Փարիզի Հայագիտական Հիմնարկի տնօրէնուհի եւ Հայաստանի Ակադեմիայի արտասահմանեան անդամ դոկտ. Անահիտ Տոնապետեանի «Արեւմտահայերէնը 100 տարի ետք - հարցեր եւ հեռանկարներ» զեկոյցը: Ph 047



Դոկտ. Տոնապետեան շրջանաւարտ է Սորպոն Համալսարանէն, մասնագիտանալով լեզուաբանութեան ճիւղին մէջ: Ան Inalco-ի մէջ (Արեւելեան Լեզուներու եւ Քաղաքակրթութիւններու Ազգային Հիմնարկ) լեզուաբանութեան փրոֆեսոր է, եւ հայագիտական ամբիոնի վարիչ՝ 1991 թուականէն ի վեր:

Իր բացման մէջ, Անահիտ Պալեան ներկայացուց զեկուցաբերին կենսագրականը եւ զայն հրաւիրեց ելոյթ ունենալու: Դոկտ. Տոնապետեան նշեց թէ 2010-ին, արեւմտահայերէնը UNESCO-ի կողմէ պիտակաւորուցաւ որպէս վտանգուած լեզու:

Ապա դասախօսը ներկայացուց սոյն վտանգին տուն տուող պատճառները, բաղդատականներ ընելով աշխարհի միւս վտանգուած լեզուներուն հետ: Դոկտ. Տոնապետեան նոյն օրուան ընթացքին այցելած էր նաեւ Սուրբ Յակոբ Վարժարանի երկրորդական Վարժարան, որուն աշակերտներու հայերէն լեզուի գործածութիւնը դրականօրէն տպաւորած էր զինք: Ներկաներէն ոմանք՝ մասնաւոր հայ ուսուցիչները բաժնեցին իրենց մտահոգութիւնները այս հարցին շուրջ, շեշտելով թէ տան մէջ խօսուած լեզուն մեծ դեր ունի յիշեալ վտանգին առաջը առնելու գծով, ներկաները յանգեցան նոյն եզրակացութիւններուն, ինչպէս օրինակ Մոնթրեալ հայ գաղութը համեմատաբար երիտասարդ ըլլալուն, երրորդ լեզուի ֆրանսերէնի պարագան, որը կարելի կը դարձնէ որ աշակերտները ընտրեն հայերէնը իբր խօսակցութեան լեզու: Սակայն այս մէկը չի նշանակեր թէ յետագային գաղութը պիտի չունենայ այն մարտահրաւերը որ Ամերիկայի կամ Եւրոպայի գաղութները կը դիմագրաւեն այսօր: Մարտահրաւեր մը որ պիտի բնորոշէ արեւմտահայ լեզուի ապագան գործածել զայն իբր «բնիկ լեզու» կամ դասաւանդել զայն իբր երկրորդ լեզու:

• Կազմակերպութեամբ Համագրայինի Գանատայի Շրջանային Վարչութեան, 10-11 Հոկտեմբերին տեղի ունեցաւ ընկերական համախմբում: Ստորեւ, որոշ յայտարարութիւններով կը ներկայացնենք Թամար Տոնապետեան-Գուգուեանի տպաւորութիւնները:

Բժայնդորդէն մտածուած եւ կազմակերպուած յայտագիրը ծայր առաւ 10 Հոկտեմբերի յետմիջօրէին, Թորոնթոյի Հայ Կեդրոնի Համագրայինի «Յարութիւն Մանուկեան» գրադարանին մէջ: «Գլաճոր» մասնաճիւղի ատենապետ ընկի. Մեղեղի Էթիմեզեանի բարի գալուստի խօսքէն ետք, Համագրայինի «Նու» ֆիլմի փառատօնի առաջնորդ ընկ. Մեակ Եղոյեան կը ներկայացնէ բեմադրիչ Jamie Day Flecker, որուն վաւերագրական ֆիլմի՝ Photos by Kirk ցուցադրութիւնը մաս կը կազմէ յայտագիրն եւ որ նաեւ պիտի ցուցադրուի Նոյեմբերին, «Նու» ֆիլմի փառատօնի ընթացքին: Ներկաներս մեծ հետաքրքրութեամբ կը դիտենք ֆիլմը. նիւթը կը դառնայ հայոց Յեղասպանութենէն ազատած, Bronx-ի թաղամասերուն մէջ իր կեանքը շարունակած ու մեծ համբաւի տիրացած լուսանկարիչ Գուրգէն Յովսէփեանի շուրջ: Բեմադրիչը կը բացատրէ թէ ընտանեկան բարեկամութեան իբր հետեւանքէրմտադրած է Գուրգէն Յովսէփեանի մասին ֆիլմ պատրաստել:



Հակիրճ դադարէ մը ետք, ընկ. Վրէժ-Արմէն Արթիսեան կը վարէ շահեկան գրոյց մը «Կարելի է թէ կարելի չէ» խորագրով: Նիւթը կը կեդրոնանայ հայ մշակոյթին շուրջ: Ընկ. Վրէժ-Արմէն իր գրոյցը բաժնած է երեք մասի - պահել, փոխանցել, զարգացնել - եւ իւրաքանչիւրին շուրջ հմտօրէն կը վարէ միտքերը շօշափող եւ գրգռող հարց-պատասխաններու շարք մը: Ի հարկէ երբ կը խօսինք հայ մշակոյթի մասին, զայն կը հասկնանք իր ամբողջութեամբ. սակայն, անխուսափելիօրէն բոլորին մտքին մէջ են առաջին հերթին՝ հայ լեզուն ու գրականութիւնը: Ներկաները դիտել կու տան թէ ամենէն դժուար հարցը հայ լեզուի փոխանցումի հարցն է: Կարծիքները ընդհանուր առմամբ այն տպաւորութիւնը կը ձգեն թէ պահպանել կը նշանակէ փոխանցել, իսկ փոխանցելու համար զարգացնելը իր որոշիչ դերը կը խաղայ: Իսկ գալով կարելիին թէ ոչ, անշուշտ «կարելի է» պիտի ըլլար պատասխանը. որովհետեւ անկարելիին

դէմ ծառայած ու պայքարած ազգի մը գաւակներուն համար անկարելի բան չկայ երբ խնդրոյ առարկան հայ ազգի ու հայ մշակոյթի գոյատեւումն է:

11 Հոկտեմբերի առաւօտեան, պայծառ արեւը մեզի ուղեկից կը մեկնինք դէպի Niagara Falls, վայելելու աշխարհի հրաշալիքներէն մին, ապա կուղղուինք դէպի Niagara-on-the-Lake: Կայցելենք Peller Estates նշանաւոր գինիի գործարանն ու շուրջի այգեստանը, իսկ երեկոյեան թատերական ներկայացումը կը հանդիսանայ յայտագիրին վերջին բաժինը: Shaw Festival-ի գլխաւոր թատերասրահին մէջ, հաճոյքով կը դիտենք Sweet Charity երաժշտախառն բեմադրութիւնը: Ու այսպիսով, երկու երազային օրերը պարգեւած խինդն ու ծիծաղը, պտոյտներն ու մշակոյթը յիշարժան պահեր կը հրամցնեն բոլորին:

Զուլալ Երրեակը Մոնթրեալի եւ Թորոնթոյի մէջ
• Հոկտեմբեր 3-4 շաբաթավերջին, Համագրայինի «Սանահին» եւ «Գլաճոր» մասնաճիւղերու վարչութիւնները կազմակերպած էին «Զուլալ» երրեակի յաջորդական ելոյթները երկու քաղաքներուն մէջ: Ահաւասիկ այդ ելոյթներուն նկարագրականը Թամար Տոնապետեան-Գուգուեանի կողմէ (յապաւումներով):

Բեմը զուրկ է պսպղուն յարդարանքներէ, նուագարաններէ ու գործիքներէ. կան երեք տաղանդաւոր արուեստագետներ Երագ, Թենի եւ Անայիս, իւրաքանչիւրը իրեն յատուկ անհատականութեամբ. կայ իր պարգութեան մէջ բարձր հայ գաւառական երգը:



Հպանցիկ ակնարկ մը յայտագրին՝ ու արդէն հոգիները կը ջերմանան: «Ախ նինար» ժողովրդական երգը մեզ կը տանի Մասուն գաւառ, այն օրերուն երբ երգերը կը հիւսուէին թոնիին շուրջ հաւաքուած հարազատներու կողմէ: Ու հակիրճ բացատրական մը երգին մասին, անզլերէնով: Թէ ինչու՞ անզլերէնով. որովհետեւ, կը բացատրէ Երագ Մարգարեան, տրուած ըլլալով որ Զուլալը հանդէս կու գայ հայ եւ օտար հասարակութեան առջեւ, կարելոր է որ օտարներն ալ ծանօթանան մեր երգերուն, մեր մշակոյթին: Եւ այսպէս, իւրաքանչիւր երգի մեկնաբանութենէն առաջ կը տրուի համապատասխան բացատրականը:

«Ախ նինար»ին կը յաջորդէ Կովիտասի «Յովակ ջան»ի կատարումէն ետք «Եանա եանա»ն մեզ կը փոխադրէ Զաւախք, ուրկէ կը սաւառնինք դէպի Վան, Համբարձման տօնին մաս կազմելու: «Վիճակ» երգը խանդավառ մթնոլորտ մը կը ստեղծէ:

Կը լսենք Աշուղ Հաւասիի «Զեփիւր բարեւ տար, գարնան արեւ տար իմ եարին»ը: Գալով «Մոկաց հարսներ»ուն, լաւ անակնկալ է հանդիսատեսին համար լսել երգին երկու տարբերակները. բունը եւ ապա՝ յետոյ մշակուած եւ ընդհանրացած տարբերակը: Մաւապացոյցներէն մեկն է Զուլալ երրեակի ուսումնասիրական գործին, ուր իբր արդիւնք կը յայտնաբերուին անցեալին մէջ կորած երգեր ու մեղեդիներ:

Դարձեալ Վան ենք. կը հնչէ ծանօթ «Նինօ»ն, հանդիսատեսը կը նկերանայ մերթ ծափով ու մերթ երգով ու կը հասնինք առաջին բաժնի աւարտին «Մեր տան» երգի մեկնաբանութեամբ:

«Զինչ ու զինչ»ը Կարա Մուրգայի ստեղծագործութիւններէն է. բացատրականները կօզնեն երգը առաւել եւս իմաստաւորելու, տրուած ըլլալով որ գաւառական երգերուն

մէջ կը գերիշխէ զանազան բարբառներու գործածութիւնը: Կը յաջորդէ Կոմիտասի «Շողեր ջան»ը, այնքան հոգեպարար ու հարազատ: Իսկ ինչ պիտի ընէր Թալինի մէջ նոր բոյն կազմած Սասունցին, եթէ ոչ աչքը յառած իր պապենական հողերուն չկրկնէր իր զակինը: «Քելէ լաօ, քելէ էրթանք մըր էրկիր», ուր մինչ օրս կը սպասեն հերն ու մերը, հողերը որ «առանց մըրդի արցունք կը թափին...»: Տարօն աշխարհէն սերած Արմէն Մովսիսեանի ստեղծագործութիւններէն, կը լսենք խորիմաստ «Մանչա» երգը: «... արօ, քամին ուր կ'երթայ...»: «Լիլի» ժողովրդային երգը կու գայ Սեանէն, որուն կը յաջորդէ «Քամին եանա» աշխոյժ երգը, գորս հաճոյքով կու նկնորէ հանդիսատեսը:

Նուագարաններու ձայները, ընդհանուր բեմականացումը որ Զուլալ երրեակը իր ճարտարութեամբ այնքան բնական ձեւով կը դրսեւորէ, մեզ կը փոխադրէ Մշոյ շուկայի եռուզեռին մէջ: «Գացեր իմ շուկէն...»: Պարզ ու միամիտ, վառվռուն այս երգերը կարտագուլացնեն երբեմնի կայտառ ու ուրախ կեանքը մեր հողերուն վրայ: Կանցնինք Բալու. կը հնչէ նշանաւոր «Թամգարա»ն, բազմապատկերով հանդիսատեսին խանդավառութիւնը որ իր գագաթնակէտին կը հասնի Սասնոյ «Հա նինա»ով: Սրահը ոտքի է, ծափերը կը շարունակուին, չենք յագեցած:

Շողկեփունջերու եւ շնորհակալական խօսքերու փոխանցումէն ետք՝ Մոնթրէալի մէջ Մանահին մասնաճիւղի ատենապետ Թամար Շահինեանի կողմէ իսկ Թորոնթոյի մէջ Գլաձոր մասնաճիւղի ատենապետ Մեղեղի Էթիեմեզեանի կողմէ, «Զուլալ»ը դարձեալ բեմի վրայ է. կը հնչէ երգ մը, որ հաւանաբար մեր գեղեցկագոյն մեղեղիներէն նկատուի, «Արի իմ Սոխակ», խօսք Ռ. Պատկանեանի:

Յոյժ գնահատելի նախաձեռնութիւն մը Համազգայինի կողմէ, որուն առաքելութիւնը ի վերջոյ հայ մշակոյթի փոխանցման մէջ կը կայանայ: Զուլալ երրեակը անգամ մը եւս զմայլեց բոլորը իր բարձրորակ համերգով, իր բազմապիսի տաղանդներու դրսեւորումով: Իսկ հանդիսատեսը մեկնեցաւ իր պապերու ոգին գրկելով հետը:

• 7-8 Նոյեմբեր շաբաթավերջին, Սբ. Յակոբ Ազգային Վարժարանի «Բաստրմաճեան» թատերասրահին մէջ, Մոնթրէալի «Մանահին» մասնաճիւղի «Պետրոս Աղամեան» թատերախումբը հանրութեան ներկայացաւ Նիլ Սայմընի «Կոճատ Զոյգը» երգիծական թատերախաղով, բեմադրութեամբ Յակոբ Գարայեանի:



Բոլորովին երիտասարդ նոյնիսկ սկսնակ ոյժերով այս ներկայացումը հանդիսատեսներուն պարզեւեց զուարճալի պահեր:

• 13 Նոյեմբերին, հովանաւորութեամբ Միջազգային Յարաբերութիւններու եւ Ֆրանքոֆոնիի Գեպէթի նախարար Քրիստին Սէն-Փիլիբի եւ կազմակերպութեամբ «Մանահին» մասնաճիւղի Կերպարուեստի յանձնախումբին, տեղի ունեցաւ վաստակաւոր նկարիչ Ռոպերթ Էլիպէթեանի կեանքին եւ գործերուն մասին անցեալ տարի հրատարակուած գրքին շնորհահանդէսը, որուն կը նկերանային իր գործերէն շատ գեղեցիկ հաւաքածոյ մը: Յուսահանդէսը շարունակուեցաւ ամբողջ շաբաթավերջին ընթացքին, Համազգայինի «Մանահին» արուեստի կեդրոնէն ներս:



• «Գլաձոր» մասնաճիւղի գրասէրներու խմբակի հաւաքներուն այս տարեշրջանի վերամուտը տեղի ունեցաւ 15 Նոյեմբեր 2015ին, Համազգայինի «Յ. Մանուկեան» գրադարանէն ներս:

Անցեալ մի քանի տարիներուն ընթացքին, գրասէրներու խմբակի երիտասարդ անդամները ներկայացուցած էին տարբեր հեղինակներ եւ նիւթեր, բոլորն ալ հայ, բոլորն ալ գրած հայերէնով: Ժամանակը հասած էր պատուելու եւ ձօնելու հայ լեզուն, գրականութեան ընդմէջէն:

Հաւաքի բացումը կատարեց Համազգայինի «Գլաձոր» մասնաճիւղի ատենապետուհի Մեղեղի Էթիեմեզեանը: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ընթերցեց Կոստան Զարեանի հայերէն լեզուով գրելու դրդապատճառին մասին հատուած մը:

Ապա, հերթականօրէն հանդէս եկան Արմէն Արթին Մուշեղ Իշխանի «Հայ լեզուն տունն է հայուն» բանաստեղծութեամբ, Հայկ Յարութիւնեանի հայլեզուի մասին գովերգներու շարքով (Վիքթոր Համբարձումեան, Եղիշէ Չարենց, Լորտ Պայրըն, Մեծարենց), Անի Խաչատրեանի Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» բանաստեղծութեամբ, Գեորգ Տանայեանի Գարեգին Եպս. Սրուանձտեանցի «Գրաբար Աշխատաբար վեճ»ով եւ Վազգէն Շուշանեանէն հատուածով մը, Արփի Ազըլեանի Յովհաննէս Շիրազի «Հայոց Լեզուն», Տարօն Հալաճեանի Վահան Թէքէեանի «Տաղ հայերէն լեզուին», Տարօն Քէսքինեանի Պարոյր Սեակի «Մայրենի լեզու» եւ Թամար Տօնապետեան-Գուգուեանի Շաւարշ Նարդունիի «Կարօտ հայ լեզուին» բանաստեղծութիւններով:

Ձեռնարկը մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ: Հաւաքի աւարտին, առ ի քաջալերանք, մասնակցողներուն բաշխուեցաւ այլազան հեղինակներէ հայերէն լեզուով գիրքեր:

• Շարժանկարի փառատօններու շարքին իր պատուաւոր տեղը գտած «Գլաձոր» մասնաճիւղի «Նու» փառատօնի այս տարուան տասներորդ տարեդարձը կը զուգահիշէր Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին, որուն նուիրուած էր փառատօնի յայտագիրը:

Առաջին անգամ ըլլալով, այս տարի փառատօնը կերկարէր մէկ շաբթուան վրայ՝ 16-22 Նոյեմբեր. յայտագիրը կը բաղկանար 20 երկիրներէ 50 ֆիլմերով, որոնց կարգին՝ ֆրանսահայ համբաւաւոր բեմադրիչ Րոպերտ Կետիկեանի Une histoire de fou եւ Au fil d'Ariane, Առնօ Խաչաճանեանի Les chemins arides, Ելենա Արշակեանի «Անաւարտ Թոյլ», Կորին Ափրիկեանի Moskvitch, My Love, Bruce McDonald-ի Hellions, Christopher Chambers-ի Aram, Aram, ֆիլմերը:




Յայտագրին մէջ յատուկ տեղ կը գրաւէր Operation Nemesis պիտակաւորուած երեք յաջորդական ֆիլմերու Համլէտ Դուլեանի «Ընկրմում Կրակի Մէջ», Jon Milano-ի Straw Dolls, Haci Orman-ի Homo Politicus եւ Արա Երնջակեանի «Խաւարում» ֆիլմերը, որոնց կը յաջորդէր Կլոր Սեղան առաջնորդութեամբ Էրիզ Պողոսեանի եւ Marian Mesrobian MacCurdy-ի:

Փառատօնի երաժշտական յայտագրին մաս կը կազմէին ֆրանսական «Մեծ Պագար» նուագախումբը, Յարութ Պետրոսեան եւ «Հորովել» խումբը, պրագիլահայ երգչուհի Իզապելլա Պապլումեան, եւ «Գլաձոր» մասնաճիւղի «Էրեբունի» պարախումբը:

• 18 Նոյեմբեր 2015ին, հարիւր գրասէրներ ներկայ եղան Մոնթրէալի Հայ Կեդրոնի «Անարոնեան» սրահէն ներս, Գառնիկ Բանեանի «Goodbye Antoura» գիրքի շնորհահանդէսին: Ձեռնարկը կազմակերպուած էր Թէքէեան Մշակութային Միութեան, Պոլսահայ Միութեան, եւ «Մանահին» մասնաճիւղի գրական յանձնախումբին կողմէ:

Իր բացման խօսքով Անահիտ Պալեան բացատրեց, թէ «Goodbye Antoura» գիրքը, թարգմանութիւնն է Գառնիկ Բանեանի «Յուշեր Մանկութեան եւ Որբութեան» գիրքին, եւ կը հանդիսանայ լուսագոյն



օրինակներէն մէկը, ուր կը նկարագրուի Մեծ Եղեռնեան սարսափը ապրած հեղինակի մանկութիւնն ու պատանեկութիւնը: Գիրքը թարգմանած է Լիբանանէն Գալիֆորնիա հաստատուած, երիտասարդ ուժ մը՝ Միմոն Պեօճեքեան, որուն պատգամն ու կարծիքը գրքին մասին, ներկաները լսեցին տեսերիզի միջոցաւ: Միմոն Պեօճեքեան նշեց թէ այս գիրքը ցոյց կու տայ, թէ ինչպէս մանուկներ, առանց անպայման հասկնալու իրենց շուրջ պատահած դէպքերը, բնագոյրէն կը դիմադրեն երբ իրենց ինքնութիւնը սպառնալիքի տակ է:



Գառնիկ Բանեան ծնած է 1910ին, Կիւրին: Հազիւ հինգ տարեկան, ենթարկուած է տեղահանութեան եւ անապատի ճամբուն վրայ կորսնցուցած է իր մայրը, քոյրն ու եղբայրը: Եղեռնէն հրաշքով փրկուած հայ որբերը թրքացնելու նպատակով ձեւալ Փաշայի կազմակերպած 100 հազարաւոր հայ որբերու հաւաքին ընթացքին փոխադրուած է Անթուրայի որբանոցը, ուր ապրած է որբանոցային կեանքի բոլոր դժուարութիւնները: Ապա իր ողջ մնացող ընկերներուն հետ փոխադրուած է Ժպէլի որբանոցը, ուր ստացած է ազգային առողջոգիով դաստիարակութիւն: Որբանոցային կեանքը իր մէջ կուփած է պայքարի եւ տոկունութեան ոգի մը, որուն շնորհիւ յաղթական պայքար տարած է կեանքի հարուածներուն դէմ:

Որբանոցէն ետք նետուած է կեանքի ասպարէզ. արհեստի ճամբով, զբաղած է էլէկտրական գործերով: Ուսման անյազ փափաք ունենալով եւ բախտի տնօրինումով արհեստը կէս ձգած է ու մտած է նորաբաց Համազգայինի ձեւարանը, 1930ին: 1935 Յունիսին եղած է ձեւարանի առաջին հունձքի 8 շրջանաւարտներէն մէկը: Այնուհետեւ իր կեանքը եղած է ուսման, դասաւանդութեան եւ գիրի, գրականութեան աշխարհը: Ամուսնացած է եւ ունեցած երկու զաւակներ՝ Հուրի եւ Շադիկ: ձեւարանի մէջ եւ այլուր, Գառնիկ Բանեան ճանչցուած է իբրեւ հայոց լեզուի եւ հայագիտական նիւթերու ուսուցիչ: Ան Լեւոն Շանթի տնօրէնութեան ժամանակ վարած է փոխ-տնօրէնի պաշտօն, իսկ Միմոն Վրացեանի ժամանակ, Մուշեղ Իշխանի հետ նշանակուած է տնօրէնի օգնական:

1936ին, իր շրջանաւարտ ընկերներուն հետ միասին, Գառնիկ Բանեան հիմը դրած է ձեւարանի Շրջանաւարտից Միութեան: 1944ին եղած է հիմնադիր անդամ Շրջանաւարտից Միութեան պաշտօնաթերթ «Ալօս»ին եւ ստանձնած խմբագրութեան պաշտօնը:

Գառնիկ Բանեան եղած է մայրն էւ գործօն անդամ Համազգայինի, մերթ իբրեւ պարզ անդամ, մերթ իբրեւ վարչական եւ մերթ իբրեւ քարտուղար եւ գործավար: Պատանեկութեան տարիներուն անդամակցած է ՀՅԴ. շարքերուն եւ վարած՝ պատասխանատու պաշտօններ: Ան իր մասնակցութիւնը բերած է Ազգային Իշխանութեան զանազան մարմիններուն մէջ, մասնաւորաբար իբրեւ Ազգային Խորհուրդի անդամ եւ ատենապետ: Եղած է Ազգային Երեսփոխան, Քաղաքական

Ժողովի և Գաւառական Ժողովի կարկառուն դէմքերէն: 1970ին իր երկարամեայ կրթական, մշակութային և ազգային գործունէութեան համար Խորէն Ա. Կաթողիկոսի կողմէ պարգևատրուած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Մահացած է 23 Յուլիս 1989ին:

Թէքեան Մշակութային Միութենէն Միլվա Ամատունի հրաւիրեց Բժիշկ Կարպիս Հարպոյեանը ներկայացնելու «Յուշեր Մանկութեան և Որբութեան» գիրքը:

Բժիշկ Հարպոյեան բժախնդրօրէն ներկայացուց հեղինակին կեանքը գաղթի ճամբուն վրայ, ուր ան կորսնցուցած էր իր ընտանիքի անդամները ու ճաշակած տեղահանութիւնը իր բոլոր դժուարութիւններով և Անթուրայի որբանոցի կեանքը իր դժոխային բոլոր երեսներով՝ հայ որբերու թրքացում, անօթութիւն և չարչարանքներ: Այս բոլորը ան կատարեց մերթ ընդ մերթ ընթացելով գրքէն հատուածներ, պատատին վրայ միաժամանակ ներկայացնելով նիւթին առնչուող պատկերներ: Միլվա Ամատունի յաջորդաբար հրաւիրեց հեղինակին դուստրը Հուրի Բանեանը, որ 27 տարիներէ ի վեր կը վարէ Պոսթոնի Սուրբ Ստեփանոս վարժարանի տնօրէնութիւնը և իր մեծ ջանքերով որակաւորած ու ընդարձակած է գայն: Ան պարգևատրուած է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ և Ջապէլ Թագուհիի Մետալով Ազգային առաջնորդարանի կողմէ:

Հուրի Բանեան իր խօսքին մեջ, շնորհակալութիւն յայտնեց երեք միութիւններուն, որոնք կազմակերպեցին իր հօր գիրքին շնորհահանդէսը: Ան ներկաներուն բացատրեց այս գրքի թարգմանութեան պատճառները, և ինչպիսի անդրադարձ ունեցած է այս գիրքը թէ իր ընտանիքին և թէ ամբողջ սփիւռքի տարածքին: Ան իր խօսքին մեջ յիշեց թէ գիրքը հրատարակուած է Stanford University հրատարակչատան կողմէ և գիրքի յառաջաբանն ու վերջաբանը կատարած է University of California, Davis-ի Մարդկային Իրաւունքներու բաժնի դասախօս Փրոֆ. Keith Watenpaugh, որ գալիք տարիներուն իր ուսանողներուն հետ պիտի ուսուցասիրէ գիրքը: Հուրի Բանեան նաեւ արտայայտեց իր բարձր տպաւորութիւնները Սուրբ Յակոբ ազգային վարժարանի աշակերտներուն մասին, որոնց այցելած էր նոյն առաւօտ:

Ձեռնարկի աւարտին, ներկաները իրենց հետ տարին Հուրի Բանեանին կողմէ մակագրուած գիրքերը՝ ձեռով մը բաժնեկից ըլլալու հայ որբերու ցաւայի յիշատակներուն, միաժամանակ նորոգելու իրենց պայքարի և պահանջատիրութեան կամքն ու ոգին:

Անահիտ Պալեան

• Հովանաւորութեամբ Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի Գանատայի մարմնին, կազմակերպութեամբ Համազգայինի «Մանահին» մասնաճիւղին, գործակցութեամբ Համազգայինի Թորոնթոյի «Գլաձոր» մասնաճիւղին, 21 Նոյեմբեր 2015ին, Մոնթրէալի College Regina Assumpta-ի, Marguerite Bourgeois շքեղ սրահին մեջ, միացեալ ելոյթ ունեցան Մոնթրէալի Համազգայինի «Անի» և Թորոնթոյի Համազգայինի «Էրեբունի» պարախումբերը:



Հոգեւոր հայրերու և հիւրերու կողքին, ներկայ էին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տէր Մեղրիկ Սրբ. Եպիսկոպոս Բարիքեան, Folklore Canada-ի վարիչ Կի Լանտրի և տիկինը: «Մանահին» մասնաճիւղի վարչութեան անունով ֆրանսերէն և հայերէն բացման խօսք արտասանեց Թամար Շահինեան: Անկէ ետք բեմ բարձրացաւ Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի Գանատայի մարմնի ատենապետ Միւր Գարազաշեան, որ իր խօսքին մեջ նշեց, որ մեր դատը ճանաչման հանգրուանէն պահանջատիրութեան հանգրուան անցած է: Գնահատանքի խօսք ուղղելով Համազգայինի Գանատայի շրջանային վարչութեան, նաեւ շնորհակալութիւն յայտնելով երկու վարչութիւններուն և պարախումբերուն ան շեշտեց, որ մինչեւ այն ատեն, որ իննսունէ աւելի հայ երիտասարդներ կը պարեն ոչ միայն որպէս մշակոյթ ներկայացնողներ, այլեւ՝ որպէս հայ յ, մենք պիտի հասնինք մեր վերապրող սերունդի իրաւունքներուն ամբողջական Հայաստանին: Ելոյթի առաջին բաժինով հանդէս եկաւ «Անի» պարախումբը, որուն պարերուն թեման էր «Թռչող Վիշտ»-ը, իսկ գեղարուեստական ղեկավարը Եւա Հայրապետեանը, որ 1995-էն ի վեր կը ղեկավարէ պարախումբը տարիներու ընթացքին ներկայացնելով նոր դարու պարեր: Յաջորդաբար ներկայացուցան հայ ժողովուրդի վիշտը կենդանացնող արդիական պարեր՝ «Լքում», «Մի տար ինձ հեռու», «Թռչող Վիշտ», «Քոչարի», «Մերենատ», «Խոստովանանք», «Ոգեշնչում» և «Մեռելներու հոգու համար», որոնք ներկաներուն լաւագոյնս փոխանցեցին մեր ժողովուրդի ապրած վերիվայրուճներով լի անցեալը միշտ յոյսի նշոյլ մը ստեղծելով պարերուն ընդմեջէն: Նկատելի էր պարողներուն փորձառու և բացառիկ կատարումը: Երեք պարերու մենակատարն էր Մարի Յովհաննէսեանը իր ինքնավստահ ու բարձր գնահատելի կատարողութեամբ: Արտայայտչական ու խորհրդանշական պարերուն ընթացքին մերթ կ'արտայայտուէր վիշտը, մերթ ներշնչումը, վերապրումն ու վերջաւորութեան երեք երգողներու կողմէ «Տէր ողորմեայի» տպաւորիչ կատարումով մեր ժողովուրդի աննկուն կամքի ու հաւատքի յաղթանակը: Այս բաժինին զգեստաւորումը աւանդականէն անդին՝ պարերուն խորհրդանշիչն պատշաճեցուած էր բժախնդրօրէն:



Քսան վայրկեան դադարէ ետք, որուն միջոցին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն-վաճառք, հանդէս եկաւ «Էրեբունի» պարախումբը, որուն գեղարուեստական ղեկավարն է Լոռի Նաճարեանը: Երկրորդ բաժնի թեման էր «Ազգի ոգին»: Յաջորդական հայկական պարերը՝ «Տուն իմ հայրենի», «Հայկազուններ», «Տըլէ եաման», «Թամգարա», «Մերիկ մերիկ», «Նուռերու պար», «Կիլիկիա», «Մեր ճանապարհը» և «Հայ ենք մենք», խանդավառեցին ներկաները և մեր ժողովուրդի իսկական վճռակամ ոգիի ներշնչումով վերակենդանացուցին մեր մշակոյթը: Խորիստ ու անվեհեր պարողները իրենց կայտառ կատարումով մեզ փոխադրեցին հայրենի աշխարհ և ներշնչեցին հայու ոգիով զինուելու, հայրենիքէն հեռու, օտար ափերու վրայ իսկ: Բացառիկ մենակատարութեամբ հանդէս եկաւ Լոռի Նաճարեան «Նուռերու պար»-ով: Նկատառելի էր «Մերիկ Մերիկ» պարին մեջ միախառնումը արդիական և աւանդական պարերուն: Նշենք, որ կարգ մը պարերու ընթացքին բեմին ետին պատատին վրայ կը ցուցադրուէին պարերուն հետ առնչուող հայրենիքէն նկարներ: Միջոցին նաեւ տեսերիզով մը ցուցադրուեցաւ «Էրեբունի» պարախումբին պատմականը:

Աւարտին Թամար Շահինեան բեմ հրաւիրեց յանձնախումբի անդամները, օգնականները, Գլաձոր և Մանահին վարչութիւններու ներկայացուցիչներն ու երկու պարուստյցները, որոնց փոխանցուեցան գեղեցիկ ծաղկեփունջեր ներկաներուն բուն ծափողոյններուն ընկերակցութեամբ:

Սրբազան հօր պատգամով վերջ գտաւ անսխառեալ ելոյթը: Ան իր գնահատական խօսքին մեջ շեշտեց, թէ այս երիտասարդներուն պարերով է, որ մեր ժողովուրդի տեսիլքը պիտի շարունակուի, սպա քաջալերելով պարող շարունակուի, սպա քաջալերելով պարող տղաքն ու աղջիկները ըսաւ. «Դ՞ուք էք մեր այսօրուան հերոսները, դ՞ուք էք դէպի երկինք ճախրող Ազգի ոգին»: Ելոյթէն անմիջապէս ետք, «Մանահին» մասնաճիւղի վարչութեան հրաւերով, երկու պարախումբերու անդամներն ու անձնակազմերը ուղուեցան Հայ կեդրոն, ուր տեղի ունեցաւ խրախճանք մինչեւ առաւօտեան ժամերը: Սոյն խրախճանքով ամրապնդուեցան Համազգայինի մեծ ընտանիքին միասնականութեան ոգին և յարատեւութեան վճռականութիւնը:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Նուիրում՝ սերունդէ-սերունդ



Յակոբ Պալրզեան Սարգիս Մալխասեան

21 Նոյեմբեր 2015ին, Համազգայինի Մոնթրէալի «Անի» և Թորոնթոյի «Էրեբունի» պարախումբերու միացեալ ելոյթի աւարտին, Տէր և Տիկին Ատոմ Մալխասեաններ, որոնք յետնորդներ են Համազգայինի հիմնադիրներէն Սարգիս և Կարապետ Մալխասեաններու և Յակոբ Պալրզեանի, և որոնք առ այսօր իրենց ընտանիքի բոլոր անդամներով կը ծառայեն Համազգայինին, 10,000 տոլար նուիրեցին Մոնթրէալի «Մանահին» մասնաճիւղին հաւատարմով Համազգայինի պարախումբերու ազնիւ առաքելութեան և հայ մշակոյթը օտարներուն ծանօթացնելու անոնց տարած ազդեցիկ ծառայութեան:

Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան «Մանահին» մասնաճիւղի վարչութիւնը յատուկ շնորհակալութիւն կը յայտնէ Տէր և Տիկին Ատոմ և Սեդա Մալխասեաններուն, իրենց կատարած նիւթական թէ բարոյական աջակցութեան համար:

• «Գիրքը՝ մեր ընկերը, պատմութիւնը մեր երեակայութիւնը» նշանաբանով, Համազգային «Մանահին» Արուեստի Կեդրոնին մեջ, ամէն ամսուայ երրորդ շաբաթ օրը տեղի կ'ունենայ Համազգայինի «Փոքրերու Պատմութեան Ժամ» յայտագիրը: 2015 թուականի վերջին «Փոքրերու Պատմութեան Ժամ»ը տեղի ունեցաւ Շաբաթ 19 Դեկտեմբերին, որուն ընթացքին յայտագրի ներկայացուցիչ Տիկին Անի Միլիանեան-Մերայտարեան գեղեցիկ ձեռով պատմեց

Այտա Փողարեանի «Փոքրիկ Թռչունը» պատմութիւնը: Ներկայ եղող փոքրիկները մեծ հետաքրքրութեամբ գայն մտիկ ընելէ ետք, փորձեցին պատմութիւնը բեմականացնել: Ապա անցնելով սեղաններուն շուրջ անոնք պատրաստեցին փոքրիկ թռչունին բոյնը որպէս ձեռային աշխատանք, ճաշակեցին համեղ կարկանդակն ու օշարակը և մեծ խանդավառութեամբ դիմաւորեցին Կադանդ Պապուկը, որուն կ'ընկերակցէր նաեւ իր թղուկը: Համազգայինի «Փոքրերու Պատմութեան Ժամ»

յայտագրին ներկայ ըլլալով, փոքրիկները կը լսեն մաքուր հայերէն, կը սորվին նոր բառեր և հաճելի ժամանակ կ'անցնեն, սովորական օրերէ բոլորովին տարբեր:



ԱՄՆ Արևելյան Երջան

• «Համազգային»ի Նիւ Եորքի Մասնաճիւղը ծրագրած է կազմակերպել մանկապատանեկան երգչախումբ մը: Այս առիթով Հայաստանէն հրաւիրուած է հանրաժանօթ թեւոր՝ Գեորգ Հաճեան ղեկավարելու երգչախումբը: Այս հսկայական աշխատանքին հիմնական հովանաւորն է Հ. Յ. Դ. Նիւ Եորքի «Արմէն Գարօ» Կուլտուրայինը, համագործակցութեամբ՝ Սուրբ Լուսաւորիչ Մայր եկեղեցոյ:



Գեորգ Հաճեան, ծնած է Այնճար, Լիբանան, 1971-ին: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն «Յառաջ» եւ «Գալուստ Կիւլպէնկեան» վարժարանին մէջ: 1984-ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Զարեհեան» Դպրեվանքը, որուն ընթացքը ամբողջութեամբ աւարտած է 1992-ին: Յաճախած է Լիբանանի Համազգայինի «Բարսէլ Կանաչեան» երաժշտանոցը, հետեւելով հանրաժանօթ խմբավար Յարութիւն Թովիկեանի դասաւանդութեան:

• Հոկտեմբեր 2015ի աւարտին, «Համազգային»ի հիւրերն էին հայրենի երգչուհի Նունէ Եսայեան եւ պոլսահայ երգչուհի Սիւլի: Շաբաթավերջին անոնք ելոյթ ունեցան Bergen Performing Arts Center-ի մէջ հազարէ աւելի հանդիսատեսներու դիմաց, մասնակցութեամբ Համազգայինի «Արեգակ» երգչախումբին

եւ «Նայիրի» պարախումբին: Համերգը, ինչպէս «Համազգային»ի ամբողջ տարուան գործունէութիւնը, նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակին:



Համերգին յաջորդող օրերուն, Նունէն ու Սիւլիլը իրենց անձնակազմին ու Համազգայինի անդամներու ընկերակցութեամբ այցելեցին Յովհաննէան Վարժարան եւ տեսակցեցան տնօրէնութեան ու աշակերտութեան հետ: Յաջորդ օր յատուկ հրաւերով հանդիպեցան Ամերիկահայ հանրայայտ կերպարուեստագետ Մայքըլ Արամի, որ հիւրերը ընդունեց Նիւ Եորքի իր աշխատանոցէն ներս ու սիրալիկ հիւրընկալութեամբ գրուցեց անոնց հետ ու նուիրեց իր գործերէն: Ապա զանոնք առաջնորդեց Նիւ Եորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարը, որուն շրջափակին մէջ կանգնած է Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի նուիրուած իր կողմէ պատրաստուած քանդակը ու բացատրութիւն տուաւ հիւրերուն: Գերշ. Տ. Սիմէոն Ծ. Վրդ. Օտապաշեան հիւրերը դիմաւորեց ու առաջնորդեց եկեղեցի:

• 1 Նոյեմբեր 2015ին, Տիթթոյիթի Պիլմինկիսամ շրջանի Seaholm Երկրորդական վարժարանի սրահին մէջ, «Արաքս» պարախումբը ոգևորեց ներկայ հանդիսատեսները: Պարուսոյց Նայիրի Կարապետեանի ղեկավարութեամբ, եւ իր երկու

օգնականներ՝ Նայիրի Գայսերեանի եւ Տիգրան Քարնի մասնակցութեամբ պարախումբը, շուրջ 9 ամիսներէ ի վեր տենդագին աշխատանք կատարելով, պատրաստուեցաւ 11րդ տարեկան ելոյթին: «Կը Յիշենք Եւ Կը Պահանջենք» խորագրով:



Ելոյթը կը հովանաւորէին՝ Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Այտա Տաքէտեանները: Ներկայ էին գաղութի երեք յարանուանութեանց հոգեւոր, եւ պատուակալ հայրերը, եւ շուրջ հինգ հարիւր մշակութասէր հասարակութիւն մը: Օրուան հանդիսավարն էր Համազգայինի երկարամտայ ստենապետուհի Հերմինէ Մանուկեան: Ան իր բարի գալուստի խօսքէն ետք ըսաւ. «Երբ աշունը բնութային զանազան գոյներով, երբ ծառերն ու տերեւները իրենց գերազանցելի գեղեցկութեամբ հրաժեշտի կը պատրաստուին, նոյն ժամանակ ալ Համազգայինի «Արաքս» պարախումբը, իր տոհմիկ եւ ժողովրդային պարերով կը պատրաստուի այսօրուան: Պիտի տեսնէ՞ք թէ աշնանային գեղեցկութեան ու հայկական տոհմիկ տարազներու գոյներու եւ պանանքի ինչ համընկնութիւն կայ, միակ տարբերութեամբ որ տերեւները կը բաժնուին իրենց արմատներէն ու կը դառնան փոշի, իսկ «Յոյսի, Հրաշքի եւ Արաքս»ի անդամները աւելի զօրացած ու կառչած իրենց ճիւղերուն, արմատներուն, անցեալին, տարուէ տարի աւելի լիցքաւորուած կը շարունակեն իրենց պարարուեստի ելոյթը:

ԱՄՆ Արևմտեան Երջան

• Հովանաւորութեամբ ՀՀ Սփիւռքի նախարարութեան եւ կազմակերպութեամբ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Երջանային վարչութեան, Նունէ Եսայեանի բարեսիրական համերգը պսակուեցաւ մեծ յաջողութեամբ: 27 Սեպտեմբեր 2015ին, Փասատինայի Ambassador ջրէղ թատերասրահին մէջ թողացին Նունէի իրաւաստուկ ազգայնաշունչ եւ հայրենասիրական երգերը, ընկերակցութեամբ Համազգայինի «Անի» պարախումբին:



Արդարեւ, Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Երջանային վարչութեան ներկայացուցիչ Ջուլի Կէտիկեան իր ողջոյնի խօսքերով շնորհակալութիւն յայտնեց ՀՀ Սփիւռքի Նախարար Հրանտշ Յակոբեանին, Համազգայինի Կեդրոնական վարչութեան անդամ դոկտ. Վիգէն Եագուպեանին, Երջանային վարչութեան ատենապետ Մանուկ Չուխաճեանին եւ փոխատենապետ Ռոժէ Խատարեանին, ինչպէս նաեւ՝ յանձնախումբի բոլոր անդամներուն, որոնց բոլորանուէր ճիգերով կ'իրականանար այս համերգաշարը հոս թէ արեւելեան նահանգներու մէջ:

• Կազմակերպութեամբ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի Երջանային վարչութեան եւ համագործակցութեամբ Լոս Անճելըսի Իրանահայ մշակութային միութեան, յուշ-երեկոյ մը տեղի ունեցաւ տարի մը առաջ մեզմէ առյաւէտ բաժնուած բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեանի յիշատակին, Հոկտեմբեր 4, 2015ին, Լոս Անճելըսի Իրանահայ միութեան ջրէղ սրահին մէջ: Ներկայ էին Ալիսիայի ընտանիքի անդամներն ու հարազատները, պաշտօնական հիւրեր, հրաւիրեալներ, ՀՕՄի ներկայացուցիչներ, գրասերներու խումբ մը. մանաւանդ իր ներկայութեամբ ձեռնարկը կը պատուէր հայ գրականութեան երիցագոյն ներկայացուցիչ ժագ Ս. Յակոբեան:



Օրուան պատշաճ յայտագրին ընդմէջէն հանդիսատեսը յետադարձ հայեացքով պտոյտ մը կատարեց Ալիսիա Կիրակոսեանի բանաստեղծութեան ոլորտներուն մէջ: Աւելի քան 60 հատորներ, եռալեզու ստեղծագործական վաստակ՝ հայերէնով, անգլերէնով եւ սպաներէնով, բանաստեղծական հարուստ ասանդ, որ ժառանգն է հայ գրականութեան: Յայտագիրը գործադրուեցաւ հեզասահօրէն, շնորհիւ օրուան գոյգ հանդիսավարներ Սոնա Մատարեանի եւ Անուշ Հովեան-Ալեքսանեանի մասնագիտական մակարդակի բեմավարութեան, նկատառելի ներդրումին եւ մէջ ընդ մէջ տպաւորիչ ելոյթներուն:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Լոս Անճելըսի Իրանահայ միութեան նախագահ Թովիկ Ալեքսանեան, որ հակիրճ կերպով անդրադարձաւ Ալիսիայի գրական վաստակին:

Գեղարուեստական յայտագրի բացումը կատարեց ծանօթ արուեստագիտուհի Ալեմուշ Եղնագար, որ իր բացառիկ ձայնով երգեց Ալիսիայի «Այնպէս Ուզում Եմ» երգի վերածուած բանաստեղծութիւնը՝ ներկաները անմիջապէս փոխադրելով Ալիսիայի քերթողութեան զմայլելի աշխարհը:

• Համազգայինի Երջանային վարչութեան հրաւերով, ընթացիկ տարուան Փետրուար ամսուն, Լոս Անճելըս ժամանեց Համազգայինի Հայաստանի «Սօս Սարգսեան» պետական թատերախումբը եւ հայկական վարժարաններու աշակերտութեան ներկայացուց «Ամենալա Տունը» անունով թատերախաղը: Այս առթիւ, Երջանային վարչութեան թատերական յանձնախումբը կազմակերպեց Գ.-Ը. կարգերու շարադրական մրցանք մը, Լոս Անճելըսի հայկական բոլոր վարժարաններուն համար:

Մրցանքին մասնակցեցան «Ճերահեան», «Փիլիպոս», «Յովսէփեան», «Շամլեան», «Ա. Կ. Մինասեան» եւ «Մետրոպէան» վարժարաններէն 100 աշակերտներ:



Մրցանակաբաշխութիւնը տեղի ունեցաւ 17 Հոկտեմբեր 2015ին, Համազգայինի Կլենտլիլ կեդրոնին մէջ: Ներկայ էին մրցանքին մասնակից աշակերտները իրենց ծնողներուն, մեծ հայր-մեծ մայրերուն եւ հայերէնի ուսուցչուհիներուն ընկերակցութեամբ:

Բացման խօսքը կատարեց Համազգայինի Երջանային վարչութեան Թատերական յանձնախումբի ներկայացուցիչ Նարկիզ Թերզեան-Մուրիեան, որ անդրադարձաւ թատրոնի կարեւորութեան եւ անոր ունեցած դերին հայ մանուկին ու պատանիին հոգեմտաւոր աշխարհի կազմաւորման մէջ. ան նշեց, թէ աշակերտները մայրենի լեզուով ներկայացում մը ըմբռնեցին էին եւ իրենց գրութիւններուն ընդմէջէն կը ցոյց տան հայրենի գրականութիւնն ու գեղեցիկ տպաւորութիւնները, մանաւանդ որ շատերուն համար հայերէն թատրոն դիտելու առաջին կամ թերեւս երկրորդ փորձառութիւնն էր ասիկա:

Բացման խօսքէն ետք, Նարկիզ Թերզեան մեծ պատասառի վրայ ներկայացուց հայրենի թատերախումբի լուսանկարներէն շարք մը, որ կ'ամփոփէր «Ամենալա Տունը» թատերախաղէն պատկերներ, հայրենի դերասաններուն հետ հայկական վարժարաններու աշակերտներու խմբանկարներ, որոնք թարմացուցին ամիսներ առաջ Լոս Անճելըսի մէջ ստեղծուած թատերական խանդավառ մթնոլորտը, ինչպէս նաեւ՝ աշակերտներուն ապրած յիշատակները: Ներկաները յատուկ ուշադրութեամբ վերապրեցան այդ գոլորտիկ պահերը կապուած այս կամ այն դերասանի հմուտ եւ ծիծաղաշարժ խաղարկութեան հետ: